Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

32(389)
11.11.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿՄԻԱՎՈՐՎԵՆ ՊՈԱԿ-ՆԵՐՈՒՄ

Արցախի Հանրապետության վարչապետ Արա Հարությունյանը նոյեմբերի 7-ին հրավիրել է խորհրդակցություն մի շարք նախարարների և վարչակազմերի ղեկավարների մասնակցությամբ, որի ժամանակ քննարկվել են գյուղատնտեսության, կրթության և սոցիալական ապահովության ոլորտներին վերաբերող հարցեր:

Կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը ներկայացրել է կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է փոքրաքանակ աշակերտ ունեցող դպրոցները միավորել պետական ոչ առևտրային կազմակերպություններում, ինչը թույլ կտա նրանց կառավարումը կազմակերպել կենտրոնացված մեթոդներով: Վարչապետի խոսքով՝ այս գործընթացը կրթօջախների աշխատակիցների կրճատումներ չի ենթադրում, այլ ուղղակի դպրոցների իրավական կարգավիճակն է փոխում՝ դրանք միավորելով ՊՈԱԿ-ների մեջ:

Քննարկվել է նաև գյուղական համայնքներում գործող բոլոր պետական մանկապարտեզները դպրոցներին կից՝ մեկ վարչական կառույցում միավորելու հարցը: Այդ համատեքստում ընդգծվել է, որ նպատակահարմար չէ փոքր մանկապարտեզներում առանձին վարչական հաստիքներ ունենալ:

Որոշման ընդունման պարագայում՝ շրջվարչակազմերից որոշ ֆինանսատնտեսական հարցերի հետ կապված լիազորություններ կտրվեն նոր ստեղծվող ՊՈԱԿ-ներին՝ վարչակազմերի կրթության բաժիններին թողնելով միայն ուսումնադաստիարակչական գործառույթները:

Տեղեկատվությունը՝ ըստ ԼՂՀ կառավարության կայքէջի:

«ՄԵՂՈՒ» -Ն ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ՄԵԿՆԱՐԿԵՑ

«Այբ» կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ հոկտեմբերի 30-ին Հայաստանում և Արցախում առաջին անգամ անցկացվեց «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթը: Այն եկավ համալրելու «Կենգուրու. մաթեմատիկան բոլորի համար» և «Ռուսական արջուկ. ռուսերենը բոլորի համար» մրցույթների շարքը: Նպատակը պարզ է՝ տարածել և զարգացնել հայերենը, շահագրգռություն ստեղծել երեխաների մոտ հարստացնելու գիտելիքները մայրենիից: Մրցույթը նախատեսված է 3-12-րդ դասարանների աշակերտների համար:

Ինչպես տեղեկացնում է մրցույթի համակարգող՝ ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Միքայել Համբարձումյանը, մասնակցել են Ստեփանակերտի և որոշ շրջանների շուրջ 1130 դպրոցականներ: Խրախուսելի է Մարտակերտի շրջանի Առաջաձորի միջնակարգ դպրոցի օրինակը. շուրջ 60 երեխաներ դպրոցի տնօրինության նախաձեռնությամբ Ստեփանակերտում մասնակցել են մրցույթին:

ՊԱՅԾԱՌ ՈՒ ԱՐՑՈՒՆՔԻ ՊԵՍ ՋԻՆՋ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ

(Արցախապատում)

«Լուսարարի» նախորդ համարում տեղեկացրել էինք, որ հոկտեմբերին, աշնանային արձակուրդի օրերին, ուսումնական ծրագրեր իրականացնելու նպատակով Արցախում էին Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի էկոակումբի անդամները՝ իրենց ղեկավարների հետ, որոնց հետո միացել է կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը՝ կնոջ՝ Արմինեի և որդու՝ փոքրիկ Դավթի հետ: Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի նախաձեռնությամբ հ. 7 հիմնական դպրոցում կազմակերպվել է հանդիպում մայրաքաղաքի դպրոցների փոխտնօրենների մասնակցությամբ, որտեղ Ա. Բլեյանը մանկավարժական զրույցներ է ունեցել նրանց հետ: Հետաքրքիր էր ծանոթանալ հանրակրթական դպրոցում առաջինը այլընտրանքային ծրագրեր ներդրած հեղինակի մանկավարժական հայացքներին: Ի դեպ, ինչպես տեղեկացանք, Ա. Բլեյանն ամեն օր իր մտորումները զետեղում է էլեկտրոնային օրագրում՝ բլոգում, և հետաքրքրվողները կարող են ծանոթանալ mskh.am կայքից: Կրթահամալիրի գոյության 25 տարիների ընթացքում նրա հիմնադիր-տնօրենը չի խախտել այս ավանդույթը: Ասել է թե՝ ծանոթանալով տնօրենի օրագրային գրառումներին՝ կարելի է պատկերացում կազմել կրթահամալիրի անցած քառորդդարյա ուղուն:



Ստորև ներկայացնում ենք Արցախ կատարած վերջին այցելության շուրջ Աշոտ ԲԼԵՅԱՆԻ մտորումները, որոնք, կարծում ենք, մանկավարժական փորձի ծանոթացման հետաքրքիր օրինակ է:

Ամենևին մի՛ երդվիր. թող քո խոսքը լինի «այո»-ն՝ այո, և «ոչ»-ը՝ ոչ: Մեր ընտանիքի բարեկամներ՝ Շուշիի Խաչատրյան-Նալբանդյաններին ասել էի՝ այո՛ 2014-ին Դավիթ Բլեյանի ու Արմինեի հետ կլինենք Արցախում, կհյուրընկալվենք Շուշիի՝ ինձ հարազատ դարձած իրենց տանը: Արմինեին ասել էի, որ այս տարի վերջապես կտեսնի Արցախը՝ իր աչքերով...Ամառանը չստացվեց, ինչպես միշտ՝ աշխատանքային եղավ, գումարած՝ խնայում էի Դավթին: 320 կմ ճանապարհ մի ուղղությամբ, թող մի քիչ էլ տղամարդանա... Բայց Մարթա Ասատրյանի և էկո-հայրենագիտական ակումբի կողմից կրթական կամուրջների բանուկացումը, Ստեփանակերտի քաղաքապետարանի և Արցախի կրթության նախարարության հստակ հրավերը որոշակի դարձրին այցելությունը: Ո՛չ մի անկատար խոստում, ո՛չ մի կիսատ գործ՝ հրապարակային հայտարարել եմ, չէ՞, իմ բլոգում...

Դավիթ Բլեյանը՝ կեցցե, առավոտյան ժամը 7-ին կազմ ու պատրաստ ենք Արցախ մեկնումի. օրն էլ՝ պայծառ, արցունքի պես ջինջ: Արարատյան դաշտում աշնանային առավոտը մեզ ինչպիսի՛ պատեհություն պարգևեց՝ ծովի պես մեծ-խաղաղ դաշտն ու վեհափառ Մասիս սարերը Դավթին կարծես ափի մեջ ներկայացնելու.

- Հայրի՛կ, տե՛ս, Փոքր Մասիս, Մեծ Մասիս, Միջին Մասիս...,- ու մատով ցույց է տալիս... պարզությունից-վեհությունից երեք դարձած սարերն այս վեհանիստ...

- Փոքր Մասիսը շատ բարձր չի...պապա ջան, պապի ջան, ջանիդ մեռնեմ...

Տեսնո՞ւմ էք, ինչ ոգևորված-բլբուլ է կտրել մեր քյորօղլի տղան:

Ամենահետաքրքիրն ինձ համար Արցախ այս ճամփորդության մի կողմի ընթացքում Դավթի տպավորություն-արձագանքներն էին: Որքան էլ գրիչ-թղթով Դավթի սպոնտան (անմիջական-ինքնաբուխ) խոսքի գրանցման պատրաստ, որոշել էի ոչ մի արտահայտություն-պատկեր դուրս չթողնել ճանապարհին, հավատացե՞ք, հեշտ գործ չէր, ու Արմինեի օգնությունն անհրաժեշտ էր: Թող այս պատումն էլ օրվա այսպիսին լինի՝ դավթապատում, ոչ թե որպես օրվա մաս, այլ ինքն իրենով գիր դարձած Դավթի խոսք...

- Դավի՛թ, ո՞ւր են Մեծ ու Փոքր-Միջին Մասիսները, -հարցնում եմ, երբ ճանապարհին սարը մեր սիրուն չի երևում:

- Թաքնվել են, որ Դավիթը չտեսնի, հայրի՛կ: Ես թաքնվոցի եմ խաղում Մասիսների հետ...

Արտաշատ քաղաքի մոտ նորակառույց մեծ եկեղեցին լավ է երևում, չգիտեմ ինչպես՝ լսելի են եկեղեցու զանգերը...այնպես, որ ինքն իրեն Դավիթը հարցնում է.

- Եկեղեցու զանգը ո՞ւմ նման է զնգում:

Ինքն իրեն էլ պատասխանում է, երբ իր ոճով ես պատասխանի փոխարեն հնչեցնում եմ կրկին իր հարցը.

- Եկեղեցու զանգը հեծանվի նման է զնգում...

- Պապա՛, ո՞ւր ենք գնում,- պարբերաբար կհարցնի Դավիթը, ու ես անվրդով-կարևոր, որերորդ անգամ հաստատում եմ.

- Արցախում Ստեփանակերտ, Շուշի քաղաքներ կան, քաղաքում քեզ սպասող շա՛տ մարդիկ, դու կտեսնես նրանց, կբարևես... Ճանապարհին մեզ կհանդիպեն ոչխարներ, ձիեր, կովեր, ծառեր ու թփեր, սարեր ու ձորեր, բլուրներ, անտառներ... Տերևաթափ ու աշուն է Արցախում, պայծառ աշուն: Դու տեսնում ես, չէ՞, Դավիթ, աշունը...

- Պապա՛, ես ձմերուկ եմ ուզում...

Ճանապարհին ձմերուկ, սեխ ենք վերցրել, ու Դավիթը չի մոռանում...

- Տեսնե՞ս՝ ի՞նչ եղավ ձմերուկը...կտրի ուտեմ ձմերուկը, թող մայրիկը մնա, ես ու դու գնանք, կտրած ձմերուկ բերենք:

Կերավ, չհանգստացավ...

Իր հեծանիվը չվերցրեց Դավիթը, նաև ոչ մի մեքենա և գնդակ ու գիրք... Տանից դուրս գալիս շուռ եկավ, նայեց այս բոլորին, որ շարել էր տանելու համար, ու մինչ մենք մտածում էինք (հաշտված), թե ինչպես ենք 4-րդ հարկից իջեցնելու Դավթի «շրջապատին», Դավիթը ծածկեց բնակարանի դուռը (սիրում է ինքն անի, ու շատ էլ զգույշ է փակում).

- Թող մնան բոլորը, հանգստանան, պա՛պ...

Առավոտ 6-ի, 7-ի արանքում, Արցախ մեկնելուց առաջ, երբ ավարտել էի օրվա գիրը, մտնում եմ ննջասենյակ, վառում լույսը, որ Դավիթն արթնանա:

-Արև է, հայրի՛կ, շողերը ծածկի, ես արթնանում եմ...

Ինձ շարունակ զարմացնում-հիացնում-հետաքրքիր են Դավթի հասունության բոլոր նշանները: Ես չեմ սիրում համեմատել, մտովի մեկ-երկու-երեք տասնամյակ հետ գնալ: Կոնկրետ մարդ է, տղա, ինչո՞ւ շեղել ուշադրությունը...

Արենիի մոտ ցույց եմ տալիս բարձունքի վրայի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

- Ովքե՞ր են եկեղեցում, հայրի՛կ:

- Մարդիկ,- պատասխանում եմ:

- Ի՞նչ են անում մարդիկ եկեղեցում:

- Աղոթում են, Դավիթ:

- Աղոթում են, որ ի՞նչ լինի, որ ի՞նչ գտնեն ուտեն...

Մասիսը շարունակ մեզ հետ է, մոտենում-հեռանում է, տեղ-տեղ այնքա՛ն է մոտ... Ես լցվում եմ երախտագիտության զգացումով, ես հուզվում եմ, ես սարին այս շատ եմ կապված. Երևանում, հիմա՝ Արարատյան դաշտի միջով մինչև Զանգակատան բարձունք, ես շարունակ փնտրում-գտնում-սիրում եմ Արարատին... Իմ հայացքը, այո՜, մշտահմա, փոխանցում եմ Արարատ աշխարհի ժառանգին...

- Դավի՛թ, տեսել էի՞ր Մասիսը այսքան մոտից:

- Ըհը՛, էսօր,- ու հետո էլ,- թուշդ կծեմ, ուտեմ, պապիկ-հայրիկ...

Ես, գիտեք, ուշ եմ իմացել, որ իմ «պապը» իմ հայրն է... Պապ-հայրիկ՝ խառնվել են հատկապես այսօր, այսպես...

Թաղում, երբ ֆուտբոլ էինք խաղում, ու մեքենայով գալիս, դարպասով պիտի անցներ իմ մեծ եղբայրը, թաղեցի ընկերներս կանչում էին. «Բլե, արի դարպասի դուռը բաց, պապադ ավտոյով եկավ...»:

Օրը, դաշտը, սարը, հետո՝ Վայոց ձորը, Արփա գետը... նվեր են մեզ...

- Հայրի՛կ, տեսնում ե՞ս՝ ի՞նչ սիրուն աշխարհ է: Սա Հայաստա՞ննն է, թե՞ Արցախը:

- Արցախը և Հայաստանը, Դավի՛թ: Մեր Արցախն ու մեր Հայաստանը:

- Ես երկուսը սիրում եմ, հայրի՛կ...

Երկուսի թեման մի քանի անգամ հնչեց ճամփի ընթացքում:

- Մասիսը երկուսն է, Հայաստան և Արցախ՝ երկուսն են, հայրիկ ու մայրիկ՝ երկուսն են...

Կանգնած ենք Արփա գետի ափին: Չենք շտապում, ժամը երեքին է Ստեփանակերտում իմ հանդիպումը Ստեփանակերտ քաղաքի տասներեք դպրոցների կազմակերպիչ-փոխտնօրենների հետ: Մենք մոտենում ենք Արցախին քայլ առ քայլ, կարծես ոտքով ենք անցնում ճանապարհը...

- Արփա՜՝ խաղաղ, մաքուր իր ընթացքով, մարդու կեղտոտած ափերով...

- Պապա՛, ուզո՞ւմ ես քցվեմ, լողանամ, դու տեսնես, ուրախանաս...

- Ուզում եմ...

- Դավի՛թ, տե՛ս՝ ինչ աղբ է, ո՞վ մաքրի...

- Դո՜ւ մաքրես, հայրի՛կ, ես գետի ջրին նայեմ...

Մենք նորից դադար ենք առնում Խնձորեսկի հողերում. Արմինեն նկարում է կապտավուն զանգակ ծաղիկներով զարդարված դաշտեր: Չիջնել, չնկարելը հիմարություն է: Հասել ենք: Արցա՞խ, թե՞ Հայաստան. հասել ենք:

☞ 2

ՕՐԱԳԻՐ

ՊԱՅՇԱՌ ՈՒ ԱՐՁՈՒՆՔԻ ՊԵՍ ՁԻՆՁ ՀԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՕՐԵՐ

1 - Տե՞ս, Դավիթ, մեծ մեքենաներ են անցնում...

- Հայրի՛կ, ես վախենում եմ մեծ մեքենաներից,- թե՞ աչքը չի ուզում կտրել դաշտից...

-Պա՛պ, գիտե՞ս, որ ես մեծանամ, ավտո կքշեմ...

- Դավի՛թ, կարո՞ղ ես բարձրանալ է՛ն սարը:

- Իրար հետ, հայրի՛կ, թող մայրիկն էլ գա, որ նկարի...

Քաշաթաղ-Շուշի ճանապարհին անտառները՝ շա՛տ, բոլորին էլ աշունը ներկել է նախշուն... Մի խորոտ, համեղ ալոճի թուփ գտանք՝ այնքա՛ն քաղցր, որ մինչև Ստեփանակերտ հասնելը Դավիթը մոռացավ իր մոշի-մոռի մասին... Ձմերուկից պրծավ, ամեն թփից մոշ-մոռ է ուզում... մինչև Արցախ մտնելը: Ըստ Վահրամի՝ Գորիսում մոշ-մորին ցուրտը տարել է: Ստեփանակերտ չմտած՝ մի հասած պտուղներով մոշուտ նկատեց Վահրամը: Դավիթը իր հավեսը մոշից հանեց, կարմրեց ու այդպես՝ ներկած-մոշոտ մռութով մտավ մայրաքաղաք, որ Շահումյանի անվան հրապարակում լվացվի, բայց սա, պայմանավորվել ենք, այլ գրի նյութ է, չնայած՝ մի օրվա դեպքեր են, որ մեզ հետ են պատահել:

Տեղ գյուղում անպասելի գյուղամիջում մեզ շրջապատեց ոչխարի սուրուն այնպես, որ մեր մեքենան մնաց որպես ոչխարի գետի ընթացքին հետևող քար...

- Հայրի՛կ, տես՝ ի՛նչ գետ է... մայունով գնում մեր առաջից...

Ավելի բարդ էինք պատկերացնում Արցախ ճանապարհը Դավթի հետ: Դավիթը մեզ զբաղեցրեց, արանքում հանգստացավ, աչքը կպցրեց: Ստեփանակերտում կայտառ էր:

- Բարև ձեզ,- բոլորին ներկայանում էր,- ես Դավիթ Բլեյանն եմ:

Այդպես կայտառ անցկացրեց ինձ հետ ժողով-հանդիպումն ու մտավ Շուշի...

Շուշիի ազատագրման, Արցախում հյուրընկալած սովորողների և ընտանիքների հետ մեր կլոր սեղանի մասին պատմությունը, մեղավոր եմ, տեղափոխեցի այլ գիր... պատումի ձևը դեռ գլխի էլ չեմ:

Արցախի դռները սեբաստացիների առաջ միշտ բաց են: Կրկի՞ն համեցեք. կամ քոմենթ՝ մի քոմենթի:

Շարունակեմ իմ արցախապատումը:

Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի 10-րդ դասարանցի Անգելինայի քոմենթն ահա. «Շատ հաճելի օր էր՝ հաճելի մարդկանց հետ, վաղն էլ անհամբեր սպասում եմ առավոտյան ընդհանուր պարապմունքին: Ապրիլին, որ մասնակցեցի էկոտուրին, ու որ հիմա տեսա մեր էկոտուրյան ընկերներին, շատ ուրախացա, ու որոշ չափով կարոտս առա... Հուսով եմ, որ նման հանդիպումներ ու ծրագրերի փոխանակումներ հաճախ կկազմակերպվեն: Շատ հաճելի էր. ու հատկապես անակնկալի եկա, երբ քաղաքով ինձ համար զբոսնելիս հանկարծ տեսա Դավիթին Խալաթյան (Գեղարվեստի ավագ դպրոցից), ուրախությանս չափ չկար: Շնորհակալություն նման ջերմ անձնակազմի համար...Կրկին համեցեք, Արցախի դռները սեբաստացիների առջև միշտ բաց են...»:

Ես ձեր փոխարեն կրկին կկարդայի «Ուղիղ միացում Ստեփանակերտից», «Ստեփանակերտի իմ ընտանիքը», «Հյուրընկալությունը Արցախում» նյութերը:

Անգելինային ես հանդիպեցի հ. 3 դպրոցում, ընդհանուր պարապմունքի ժամանակ: Իսկական ընդհանուր պարապմունք-ճանապարհում էր՝ լավ էր մտածված: Իմ մասնակցությամբ ընդհանուր պարապմունքը դարձավ նաև սեմինար- պարապմունք. Արցախցի սովորողներն ու ուսուցիչները, ծնողները, որոնցով լեցուն էր դահլիճը, դրա պահանջը ներկայացրին: Անգելինան հիմա սովորում է Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի 10-րդ դասարանում:

Մեր սեբաստացիներին ճանապարհելուց հետո, ժամը 11:00-ին, ես պիտի լինեի Արցախ TV-ում՝ հաղորդաշարի մասնակցելու: Ինձ ուղեկցում էր սեբաստացիներին հյուրընկալած ծնողներից մեկը: Ահա, ծնողի 20 րոպե տևած պատումը ինձ համար 2-րդ քոմենթն է այս քառօրյա, 20-24 հոկտեմբերի այցին: Արցախում, Ստեփանակերտում մեզ ճանաչում են կոնկրետ, իրական ստեփանակերտցիներ, կրթահամալիրում եղած, մեր հանրակրթական կամուրջներով «երթևեկած» սովորողներ, ուսուցիչներ, բնակիչներ... Արցախում, Ստեփանակերտում այս կոնկրետ-իրական սովորողները, ուսուցիչները, բնակիչները գնահատում են, կարևորում են կրթահամալիրում իրականացվող հեղինակային մանկավարժությունը: Նրանք համոզված են, որ մենք մեր մանկավարժությամբ այսօր անհրաժեշտ ենք Ստեփանակերտին: Մեր բաց կրթական համակարգում ժամանակակից, իրական-կոնկրետ ստեփանակերտցի սովորողն ու ուսուցիչը առավել լիարժեք կդրսևորեն իրենց բնածին ընդունակությունները, տաղանդը:

Գիտե՞ք՝ սա տարիների ձեռքբերում է: Ես սա տեսնելու, արձանագրելու ակնկալիքով եմ եկել Ստեփանակերտ, թե չէ, առանց ինձ էլ քառօրյայի մասնակիցները գիտեն իրենց անելիքը: Ես դա՜ էլ տեսա: Մարթա Ասատրյանը՝ իր էկոհայրենագիտական ակումբով, Ռինա Շագինյանը՝ իր ընկերությամբ, վրացերենի դրական գործոնով, Հասմիկ Նալբանդյանը՝ էկոտուրի իր նախաձեռնությամբ և դրա զարգացման ուշադիր, մարդկային, մասնագիտական վերաբերմունքով, կեցցե՛ն:

Ահա ինչու, ուզում եմ իմ երկրորդ պատումում Արցախի կրթական համակարգի հետ մեր 6-ամյա պատմություն ունեցող գործընկերության հաջորդ փուլը արձանագրել: Դա ես բոլոր մասնակիցների հավանությամբ հրապարակեցի տոնական հյուրասիրության սեղանի շուրջ, որը, ի դեպ, մասնակցության պատշաճ բարձր մակարդակ ուներ. մասնակցում էին բոլոր հյուրընկալողներն (ստեփանակերտցիներ) ու հյուրընկալվողները (սեբաստացիներ), Արցախի ԿԳ նախարարը, փոխնախարարը, աշխատակազմի ղեկավարը, Ստեփանակերտի կրթության բաժնի պետը: Եկել է ժամանակը, մենք հասունացրել, ստեղծել ենք այդ ժամանակը մեր ընկերակցությամբ, մեր հետևողական ու բազմուղի գործընկերությամբ, թող համագործակցության այս փուլում և՛ օրակարգը, և՛ բովանդակությունը, և՛ ձևը որոշեն իրենք՝ սովորողները (անհատներ ու խմբեր) և ուսուցիչները (անհատներ, խմբեր, կազմակերպություններ)՝որպես իրենց նախաձեռնություն:

Այս քառօրյա հավաքի հաջողությունը յուրահատկություն է հաղորդում էկոտուրի, Ստեփանակերտի և Երևանի մասնակիցների (Անահիտ Մեսրոպյան և Մարթա Ասատրյան) նախաձեռնող գործոնը: Արհեստականությունը, ձևականությունը, բյուրոկրատիան տեղի են տվել: Լսե՛ք Անգելինայի քոմենթի այս թվարկումը կոնկրետ սեբաստացիների. «Հասցրել եմ ընկերներ ձեռք բերել, ու կապ ենք պահում իրար հետ: Բարևներ եմ ուղարկում Անժելին, Մերիին, Հասմիկին, Վաչեին, Դավիթին էլ այսօր եմ տեսել (Գեղարվեստի ավագ դպրոցից), ինչպես նաև Լիային, քրոջը՝ Գոհարին, Ջուլիին (Մայր դպրոցից)... Բոլորին շատ-շատ կարոտել եմ....»:

Տեսեք 14-15 տարեկան ստեփանակերտցի այս աղջնակը, շնորհիվ մեր հանրակրթական կամուրջների, քանի՜ երևանցի սեբաստացու ոչ միայն ճանաչում է, այլև որպես ընկեր կարոտում, ուրախանում նրանց հանդիպելիս: Պատկերացրեք, որ Հայաստանի և Արցախի միջև փոխանակման նման ծրագրեր իրականացնեին տասնյակ ու տասնյակ այլ դպրոցներ ևս. հանրակրթությունն այսպիսով օրակարգում գտնվող քաղաքական խնդիրը կլուծեր: Եվ Անգելինայի՝ «շնորհակալություն նման ջերմ անձնակազմի համար...Կրկին համեցեք,Արցախի դռները սեբաստացիների առջև միշտ բաց են» սրտից եկող խոսքը երախտիքի այն գործոնն է, ինչ պիտի վարկանիշ ձևավորի, իրական գնահատական դիտվի:

Այս անգամվա հավաքին արդեն ես մասնակցում էի այլ ձևաչափով՝ Արմինեի և Դավիթ Բլեյանի հետ: Ես էլ, ինչպես էկոհայրենագիտական ակումբի անդամները և ղեկավարները, իմ ընտանքով ոչ թե հյուրատանը, այլ Շուշիի իմ ընտանիքում անցկացրի՝ Խաչատրյան-Նալբանդյանների բազմամարդ ընտանիքում, իսկական ընտանեկան միջավայրում՝ իր առօրյայով, կենցաղով, հոգսերով, ուրախություններով, զերծ արհեստականությունից, պաշտոնականությունից:

Հիմա, երբ մեր ճամփորդող խմբերը Երևանում են, երբ արցախյան հաջող մեկնարկից ոգևորված՝ Հանրակրթական էկոտուր- 2015-ի կազմակերպիչ էկո-հայրենագիտական ակումբը Կոտայքի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռու, Արցախի, Վրաստանի իր գործընկերների հետ պատրաստվում է հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 2-ը Կողբի Ձիկատարում իրենց աշխատանքային հավաքին, հիմա, երբ հայրենիքի ու աշնան տպավորություններով, ուսումնական նախագծերի հաշվետվություններով լցված են մեր *mskh.am-ը,* սովորողների և դասավանդողների ուսումնական բլոգները, ասենք, որ մեր շատ նախագծեր չէին լինի կամ կլինեին ոչ մատչելի շատ սովորողների, եթե չլիներ ՀՀ պաշտպանության նախարարության աջակցությունը: Այ, որ Հայաստանում քիչ են անցկացվում կամ չեն անցկացվում այսպիսի հավաքներ-ճամփորդություններ, պատճառը նաև այն է, որ տրանսպորտային փոխադրության հարցը լուծված չէ: Հանրակրթական ծրագրերում հայրենագիտությունը, կրթական փոխանակումները աջակցության կարիք ունեն, և պաշտպանության նախարարը այդպիսի աջակցության կոնկրետ ու տպավորիչ օրինակ է ցույց տալիս:

Գանձասար տանող ճանապարհի, Վանք գյուղի, Գանձասարի վանական համալիրի, Ծովին քարի աշնանային հմայքն ու դատարկությունը չեմ հաղթահարում… Լավ, ո՞ւր է մարդը. չերևաց աշնանային երկրագործ բնիկը, չտեսանք ոչխարների սուրուներ, չհանդիպեցինք զբոսաշրջիկների՝ որևէ կարգավիճակով-ձևաչափով-փոխադրամիջոցով…Նորոգված, ապահով ճանապարհ, ու Գանձասարը դատարկ էր… Ողջ Արցախը կենտրոնացել-կենտրոնանում է Ստեփանակերտում, այս մեկ փաստը դառնացնում է, հսկա, շեն, մաքուր, կանաչ մայրաքաղաքի իրողությունը… Մեծացող մայրաքաղաքներով դատարկվող հայրենիք ունենք՝ Հայաստանում և Արցախում, ի՞նչ ուրախանաս…

http://ashotbleyan.mskh.am/

ՀՈԲԵԼՅԱՆ

«ԵՍ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԵՄ»





Կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանը հայ արդի դասական երաժշտության ճանաչված դեմքերից է: Հազիվ թե գտնվի մի երաժշտասեր հայ, ով իր կյանքում թեկուզ մեկ անգամ գերված չլինի մեր ժամանակի մեծագույն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի արվեստով, հատկապես նրա կինոերաժշտությամբ: Մեզ բախտ է վիճակվել լինել այդ հանճարեղ երաժշտի ժամանակակիցը, իսկ առավել մեծ պատիվ ու երջանկություն էր տեսնել նրան Արցախում, մեր կողքին, վայելել նրա իմաստուն խոսքն ու հրաշալի արվեստը: Տարին հոբելյանական է կոմպոզիտորի համար. լրացավ նրա 75-ամյակը, և Արցախը չէր կարող անմասն մնալ հոբելյանական հանդիսություններից: Երկար սպասված և բաղձալի հանդիպումը արցախցի երաժշտասերների հետ կայացավ՝ շնորհիվ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, կոմպոզիտորի քրոջ՝ հանրահայտ երգչուհի Արաքս Մանսուրյանի, նրա դստեր՝ երգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ Շուշան Պետրոսյանի և ԱՊԿՆ- ի համատեղ ջանքերի: Հատկանշական է, որ սիրված կոմպոզիտորին հոտնկայս և բուռն ծափողջույններով դիմավորեց դահլիճը՝ ի նշան սիրո և խոնարհումի՝ նրա անձի և ստեղծագործության հանդեպ:

Ստորև ներկայացնում ենք մեր զրույցը անվանի կոմպոզիտորի հետ:

- Վարպետ, Արցախ այցելության առիթը Ձեր հոբելյանն է. ի՞նչ է տարիքը Ձեզ համար, ինքնիրեն ածող թի՞վ, թե՞ ինչ-որ խորհուրդ ունի…

- Չէ, կենսափորձ է, իհարկե և այն կուտակումները, որ Աստված տվել է քեզ՝ թե՛ ուրախության, թե՛ դառն օրերին, երկուսն էլ քեզ համար դառնում են սիրելի ու հիմնավոր: Դու շնորհակալ ես Աստծուն, որ այս փորձն էլ ունես, այն էլ:

- Տարիների հետ ի՞նչ եք փորձում պահպանել:

- Շատ բան… Երբ ես անկողնուց վեր եմ կենում, ինձ հրամայողը գործն է: Նույն ուժով է գործում առայժմ այդ ծրագիրը, որը ձևավորվել է շատ վաղ տարիքից, գրեթե 10 տարեկանից սկսած: Ես ուշ սովորեցի հայերեն, 10 տարեկանում տառաճանաչ եղա: Ինը տարեկան էի, երբ ընտանիքով Բեյրութից Հայաստան եկանք: Ես այնտեղ ֆրանսիական դպրոցում էի սովորում, որովհետև մեր տան մոտ հայկական դպրոց չկար, իսկ իմ ծնողներն անկարող էին հեռու դպրոց տանել: Ես երկու տարի սովորեցի ֆրանսիական դպրոցում: Ճիշտն ասած՝ գոհ եմ, որովհետև այդ մշակույթի զգացողությունը դեռ ինձ հետ է, ապրում է իմ հոգում, մանավանդ, երբ ապրում ես Միջերկրականի ափերին, որտեղ ստեղծված մշակութային անցյալը մարդկության մեծագույն հարստությունն է: Երբ եկանք Հայաստան, ես գրաճանաչ դարձա, սկսեցի բանաստեղծություններ գրել՝ երկրորդ դասարանից սկսած: Ես պետք է պարպվեի. այն ժամանակից մինչ այսօր ես նույն ծրագրի ներսում եմ: Այն ժամանակ բանաստեղծությունն էր, որը շատ շուտով թողեցի, անցա երաժշտության, բայց, ի վերջո, այդ ինքնարտահայտման էներգիան մեջտեղ բերելու պահանջը նույնն է:

- 1915 թվականի ուրվականը Ձեր ընտանիքում հաճա՞խ էր շրջում, թե՞ ծնողները զերծ են պահել ձեզ այդ ցավից:

- Մայրս մշտապես մեզ պահել է այդ հունի մեջ և թոռներից յուրաքանչյուրի ձեռքից բռնած տարել է Ծիծեռնակաբերդ՝ մի փունջ ծաղիկ էլ մյուս ձեռքին: Հուշակոթողը նրա համար նաև իր ծնողների գերեզմանն էր:

- Ձեր «Ռեքվիեմի» ակունքն այստե՞ղ պիտի փնտրել:

- Հենց այդտեղից է սկիզբ առել: Դա իմ հոգու պարտքն է եղել, մեր տան պարտքն է եղել, իմ ծնողների պարտքը, որ ես իրականացրել եմ կամ փորձել եմ իրականացնել:

- Վարպետ, Ձեր ծնողներն իրենց զավակների անուններն ընտրելիս հավատարիմ են մնացել հայեցի ինքնությանը՝ Տիգրան, Միհր, Սոնա, Արաքս: Դուք պահպանե՞լ եք ընտանեկան ավանդույթը:

- Մեր ընտանիքը շատ պահպանողական էր հայեցիության հանդեպ առհասարակ՝ անուններ լինեն դրանք, սովորություններ թե ճաշատեսակների ընտրություն. բոլոր պարագաներում մեր ընտանիքը ավանդապաշտ է եղել: Չորս զավակներս էլ հետևել ենք տան օրենքներին: Աղջկաս անունը Նվարդ է: Ճիշտն ասած, կանացի անուններից ես շատ սիրում էի Հեղինե անունը: Մտադիր էի՝ եթե երկրորդ աղջիկն ունենամ, անունը կլինի Հեղինե, բայց առաջինը պետք է լինի Նվարդ, որովհետև Նվարդը Տերյանից է գալիս, Կոստան Զարյանինն է, Թումանյանինն է: Ցավոք սրտի, միակ աղջիկը ունեցա: Տղաս մեծն է, Եղիա է անունը, հորս անունն է: Գիտե՞ք, երբ Քրիստոսը խաչված էր, ասաց. «Էլի՛, լամա սաբաք տարի»՝ «Աստված, ինչո՞ւ ինձ լքեցիր»: Էլին հենց Եղիան է, հետևաբար, մեծ խորհուրդ ունի այս անունը, որը նաև մարգարեի անուն է: Այսինքն՝ մեր տան մեջ որևէ անուն պատահական, հենց այնպես չի եղել:

- Իսկ Հեղինեն հունակա՞ն դիցաբանությունից եք սիրել…

- Անշուշտ, հունական դիցաբանությունից է, բայց ինձ համար կին և հղիություն բառերը շատ մոտ են, իսկ Հեղինե անվան հնչողության մեջ այդ իմաստը կա:

- Այսինքն՝ կնոջ կոչումը հղիության, մայրանալու հետ եք կապում:

- Այո, պտղաբերության հետ, ահա այդ պատճառով է թանկ ինձ համար այդ անունը: Եթե մեկը ինձ ներկայանում է Լենա կամ Ելենա անունով, ես ասում եմ՝ դու Հեղինեն ես:

- Դառնանք մանկության հուշերին. մինչև ո՞ւր են հասնում դրանք:

- Առավոտները սովորություն ունեինք, դեռ անկողնուց չվերկացած, բոլորս վեցով երգում էինք: Դրանք մեր երգերն էին, կոմիտասյան երգերն էին, օրինակ՝ «Սոնա յարը» (մեր տանը Սոնա կար): Երբ քույրերս մանկապարտեզ գնացին, նրանք այնտեղից երգեր բերեցին, դրանք էլ երգեցինք, լավ երգեր էին: Ինչ երգ պատահեր, ինչ հասանելի էր մեզ, բոլորս սիրով երգում էինք: Երբեմն մայրս էր պատվեր տվողը, հորս ասում էր. «Եղիա՛, այս երգը երգենք»: Ու հայրս սկսում էր. շատ գեղեցիկ ձայն ուներ նա: Երբեմն հանդեսների ժամանակ իրեն խնդրում էին երգել: Նա շատ երգեր գիտեր՝ կոմիտասյան, Հայաստանում սովորած երգեր՝ Արամ Խաչատրյան, Արտեմի Այվազյան… Շատ գեղեցիկ երգեր էին այն տարիներին, սրանք կամաց-կամաց այսօր վերադառնում են, նոր սերունդը ուզում է սրանց հիշել, ապրեցնել… Հիշում եմ՝ մեր տանը, Բեյրութում, օրացույց կար, որի հետևում սովորաբար մեծ նկար էր լինում: Մեր օրացույցի տեսարանը Երևանի Ստ. Շահումյանի արձանի գեղեցիկ նկարն էր, աչքիս առաջ է դեռ նկարը: Այսինքն՝ մենք ապրում էինք Հայաստանով: Հորս երազանքն է եղել, որ ես երաժիշտ դառնամ: Իր համար Հայաստան գալու նպատակը նախ և առաջ ինձ երաժիշտ տեսնելն էր: Ասում էր. «Տղաս դաշնամուր նվագի, դուրս գամ պատշգամբ, այնտեղ նստած վայելեմ իր նվագը»:

- Առաջին երաժշտական գործիքը դաշնամո՞ւրն էր:

- Մինչև դաշնամուրին հանդիպելը ես մանդոլին էի նվագում: Եղավ այնպես, որ մի օր մայրս ինձ ուղարկեց, որ հորս կանչեմ: Իսկ հայրս Արթիկի բանվորական ակումբում էր: Եկա ակումբ, տեսնեմ հայրս դաշնամուրի առջև նստած նվագում էր (ինքը սիրողական նվագում էր): Կողքին մարդիկ նստած թերթ էին կարդում, շախմատ էին խաղում, լավ միջավայր էր: Հայրս վեր կացավ, ես իսկույն նստեցի նրա տեղը և սկսեցի նվագել: Առաջին թոթովանքներն էին դրանք: Երաժշտությունը ես ինքնուրույն եմ սովորել՝ և՛ նոտաներ, և՛ նվագել, և՛ երաժշտության այլևայլ հարցեր, որոնք հետո պիտի դառնային ակադեմիական ուսուցման ծրագրի մաս: Դրանք բոլորը ես սկսել եմ ինքնուրույն, ինչի համար շատ ուրախ եմ, որովհետև իմ կապը երաժշտության հետ չի ճանաչել թվանշան, գնահատանք, գլուխ շոյել: Դա եղել է իմ անձնական գործը՝ ես ու իմ Աստվածը: Ես կարծում եմ, որ դա լավ սկիզբ է: Նոտաները ինքս եմ սովորել: Հիմա ես դա հպարտությամբ եմ ասում, որովհետև շատ դժվար է մենակ նոտա սովորել: Եվ երբ առաջին անգամ սկսում ես նոտաները հավաքել, նվագել, դա ի՜նչ հուզմունք է, չեք պատկերացնում: Երկու երկհնչյուն միացնում էի իրար, հետագայում պիտի իմանայի, որ դասական օրենքների մեջ գործող միացություններ են դրանք: Այդպես ես հորինում էի ու այդ ակումբի մշտական այցելուն էի: Իսկ տոնական օրերին, երբ ակումբը փակ էր, ես գիտեի ո՛ր պատուհանը պիտի բաց լինի ու ոնց եմ մտնելու ներս:

- Ե՞րբ զգացիք, որ առանց երաժշտության ապրել չեք կարող:

- Որպեսզի այդ վիճակը հասկանաս, պետք է մի օր ջրից դուրս հայտնված ձուկ լինես: Ես երբեք առանց երաժշտության չեմ ապրել, որ իմանամ՝ կարո՞ղ եմ, կամ ի՞նչ է առանց երաժշտության ապրելը:

- Երաժշտագետների կարծիքով՝ Ձեր ստեղծագործության հենքը ազգայինի և ավանգարդիզմի ներդաշնակ համադրումն է. համաձա՞յն եք: Ժամանակակից երաժշտական ուղղություններից որո՞նք եք նախընտրում:

- Ճիշտն ասած՝ մի ժամանակ լավ գիտեի ուղղությունների մասին: Հիմա դրանց մասին պատկերացումներս այնքան էլ հիմնավոր չեն, բացի դրանից՝ կարևորություն էլ չեմ տալիս: Գիտե՞ք, երաժշտությունը մի տեսակ տուն գնալ է, աղոթել է, սերերին վերադառնալ է, այդ սրբություններին վերադառնալն է: Այնտեղ արդեն քիչ տեղ է մնում «իզմ»-երի մասին մտածելու:

- Իսկ ի՞նչ ակունքներից է սնվում Ձեր երաժշտությունը:

- Նախ՝ շատ մեծ կարևորություն է ինձ համար մշտապես զգալ Կոմիտասին՝ ժողովրդական երգերը և հոգևոր երաժշտությունը: Դա հսկայական գանձարան է, անսպառ նյութ է սերունդների համար: Փորձում եմ իմ բաժինը պեղել այնտեղից: Առհասարակ, պետք է լավ յուրացնես քո արմատները և անցյալը, միաժամանակ պետք է համաշխարհային երաժշտական իրականության ամբողջ տեսադաշտը լավ իմանաս և տեսնես՝ ո՞րն է այնտեղից քեզ անհրաժեշտ տուն բերելու և տան եղածիդ հետ համաձայնեցնելու: Ինչո՞ւ համաձայնեցնելու, որովհետև արդիական մտածողությունը կարիք ունի այնպիսի խորքերի, որոնք դու տանը ունես: Ինքը դրան հանգել է, ասենք թե գեղագիտական հիմքերի վրա, դու նույն բանն ունես քո անցյալի հիշողությունների վրա: Օրինակ՝ նա ուզում է ոչ թե երաժշտական կես տոնների համակարգով մտածել, այլ՝ քառորդ տոնների, ինչն ընդունված է Արևելքում: Նա դիմում է քառորդ տոնների համակարգին՝ իբրև նոր քայլ երաժշտության մեջ, իսկ այդ նոր քայլը քո ամենահին իրականությունն է, քո արմատներում դա կա, ապրում է: Ուրեմն դու պետք է հասկանաս նրա քայլը դեպի վաղվա օրը և հենվես քո ունեցածի վրա:

- Ո՞րն է Ձեր կոմպոզիտորական մտածողության յուրահատկությունը:

- Հետաքրքիր բան է ստացվում՝ միաժամանակ թե բոլորի՝ միջազգային շարժումների հետ ես և թե քո տան ներսում ես: Ես սկզբունքորեն միշտ շատ կարևորել եմ այդ պահը, թեպետ դրան հեշտությամբ չեմ հասել, որովհետև երբեմն պատահում է, որ դրսի այդ միջոցների հանդեպ ծակաչք ես լինում, ավելին ես ուզում, ուստի միշտ չէ, որ բերածդ մերվում է: Այդ պահը դժվարությամբ է հասունանում, երբ բերածդ ու տանն ունեցածդ գալիս, ճշգրիտ ագուցվում են իրար: Դա տարիների փորձ է պահանջում:

- Մասնագետների կարծիքով՝ թեպետ Ձեր ստեղծագործության հիմքում ազգայինն է, բայց Դուք ժողովրդական մոտիվներին չեք դիմում:

- Երբեք չէ: Պատահել է՝ ինձ ասել են օպերա գրեք՝ այսինչ կամ այնինչ հերոսին նվիրված: Ես ասում եմ՝ իմ խնդիրը ոչ թե եղած հերոսին զարդարելն է, այլ՝ մի նոր հերոս գոյացնելը: Եթե ես կարողացա իմ երաժշտությամբ մի բան ավելացնել եղածին, դա կլինի իմ ուրախությունը, բայց եղածը սպառել, երբեք չեմ համարել, որ դա հետաքրքիր գործ է:

- Կոմպոզիտոր Աշոտ Զոհրաբյանը «դաժանություն» բառով է որակում այն բծախնդրությունն ու աշխատասիրությունը, որով ստեղծում եք Ձեր գործերը, այնուամենայնիվ, ինչպե՞ս են ծնվում դրանք:

- Չգիտեմ, բոլորովին չգիտեմ ինչպես: Պատկերացրեք մեկին, ով երաժշտական կրթություն չունի, բայց ընդունվում է երաժշտական ուսումնարան, տասնմեկ տարի հետո գրում է հայրեններ: Իսկ երաժշտություն սովորելը, երաժշտական ակադեմիական համակարգը յուրացնելը, պետք է ասեմ, արվեստներից ամենատարողունակն է: Շատ նյութ կա այնտեղ սովորելու՝ բազմաձայնություն, մեղեդի, նվագել, գործիքներ ճանաչել, բանաստեղծություն և մեղեդի կապերը հասկանալ, կռահել, կերպարային մտածողություն ձեռք բերել: Առանձին բաղադրամասերը, որոնցով երաժշտություն է գոյանում, տարբեր գիտությունների արդյունքում են ծնվում: Ամեն մի գործի տակ հսկա տնտեսություն կա:

- Ձեր ո՞ր գործերն եք սիրում լսել:

- Անկեղծ ասեմ՝ ես իմ գործերը լսելու սովորություն չունեմ, այսինքն՝ ինչն արդեն գրվել է: Պատահում է՝ համերգներին լսում եմ և մեկ-մեկ մտածում, որ պետք է ուրիշ տեսակ լիներ, բայց չեմ կարող ասել, որ ես միշտ օբյեկտիվ եմ իմ գործերը գնահատելիս: Առավելապես կողմնորոշվում եմ լսարանի ուշադրության աստիճանով, ի՞նչ տարավ դահլիճը: Հեղինակը դա լավ է զգում՝ ինչքանով կապվեց լսարանը քո երաժշտությանը:

- Նույն Աշոտ Զոհրաբյանը շատ ինքնատիպ ձևով է բնութագրել Ձեր ստեղծագործությունը՝ ասելով. «Մանսուրյանի երաժշտությունը պոեզիա է»: Ավելին՝ Դուք երգերի շարքեր եք ստեղծել հայ բանաստեղծների տեքստերով: Ո՞ւմ եք նախընտրում, սիրում, ո՞ւմ գիրքը կամ գրքերն են միշտ Ձեր սեղանին:

- Ես հիմա երկու թևերի վրա եմ, մի ժամանակ՝ մի 40-50 տարի միայն Չարենց էր, հիմա նաև՝ Իսահակյան է, երկուսի հետ եմ: Իսահակյան, Չարենց, նաև Տերյան, բայց ամենաշատը Չարենցի հետ եմ: Ես ամեն անգամ բացում եմ. այս ի՞նչ բան է՝ չէի նկատել, այս ի՞նչ տողեր են՝ չեմ հիշում:

- Միայն հա՞յ բանաստեղծներն են Ձեզ առինքնում:

- Միայն: Իմ կարծիքով պոետական աշխարհի իմանալը չի լինում մեկ բանաստեղծություն կամ բանաստեղծական ժողովածու ճանաչելով, մեկ բանաստեղծ ճանաչելով: Դու պետք է իմանաս առնվազն երեք-չորս հարյուր տարվա հայ պոետական կյանքը, բառի անցած ճանապարհը՝ մի սերնդից մյուսը, մի ժամանակաշրջանից մյուսը: Բառերը իրենց կյանքով են ապրում, և եթե դու չգիտես, օրինակի համար, ինչպես է «նոքա» բառը Չարենցը օգտագործում իր բանաստեղծության մեջ, կամ ինչ է Վահան Տերյանի համար «քնքշաշրշյուն» բառը, Աստված իմ, այդ ինչ հրաշք գոյություն է բառի: Եվ ինչպես է առհասարակ լինում՝ «իմ խոհերը մոլար»… Եվ հետո բացահայտում ես, որ «մոլորը» և «մոլարը» նույն բաները չեն. Տերյանը հոգևորականի տղա էր, իսկ միջնադարում, երբ մարդը այլադավան էր դառնում, նրան անվանում էին «մոլար»: Եվ սա պոետական գյուտ չէ միայն, այլ հիմնավոր հասկացություն է: Այս ամբողջը պետք է իմանաս, ես դա միայն հայերենով գիտեմ, ուրիշ լեզուներով չեմ կարող իմանալ, չունեմ երկրորդ լեզու, որ այդքան ես իմանամ:

- Երբ ընթերցում եք այդ պոետներին, Ձեր ստացած տպավորությունների՞ց է ծնվում ապագա երգը, թե՞ այն արդեն կա այդ բառերի ու տողերի մեջ:

- Ոչ, չկա: Ես չգիտեմ՝ ինչպես է ծնվում, դա առեղծված է: Ինձ համար ամեն մի գործ, որ ես գրում եմ, մանավանդ բանաստեղծության հետ կապված, վթար է: Ամեն անգամ ինձ համար բանաստեղծություն երգելը վթարից մի կերպ, հրաշքով ազատվելու նման է:

☞7

ԳՆԱՀԱՏԱՆՔԸ՝ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎ

Տարիների վաստակը դառնում է հանրագումար՝ ամբողջացնելով ձեռքբերումները: Տարիները ստեղծում են կերպար, տալիս նրա արժևորումը, իսկ տքնանքը մնում է հեռվում: Գալիս է ժամանակը, որը գնահատանքի շռայլումն է դառնում:

Ծաղիկներ, բարեմաղթանքներ, ջերմ խոսքեր: Էլ ի՞նչ է պետք մարդուն ավելի լավ զգալու հոգեպես, որը մարդկայինի ողջ էությունն է, ներաշխարհը:

Մեծերից մեկը (Մայր Թերեզա) ասել է. «Աշխարհում ավելի շատ սիրո և գնահատանքի կարիք կա, քան հացի»: Չէ՞ որ գնահատանքը հոգու հացն է, որին արժանանալը մարդու մեծագույն պարգևն է:

Ու պիտի հայտնաբերել ու եղածը ճիշտ գնահատել, այլապես հնարավոր լավը կարող է անտեսվել ու լռին ցավ պատճառել մարդուն, որն ուշադրության, գնահատանքի է արժանի: Իսկ ո՞վ չի արժանի. շռնդալից հաջողություն ունեցողն անգամ կարիք ունի անկեղծ վերաբերմունքի, էլ ու՞ր այն մարդիկ, որոնց համար ճիշտ գնահատականը մեծ լիցքերի ակունք է: Եվ գուցե ընդվզումը ծնվում է նաև ուշադրության պակասից, որը կարող է հեղաշրջումներ անել, պահանջել, ստիպել իրեն լսել: Իսկ լսելիս ինչքա՜ն քաղցրալուր է խոստովանանքը: Փորձեք և ինքներդ կհամոզվեք:

Ի՞նչ է մեզ սովորեցնում աշխարհահռչակ հոգեբան Դեյլ Կարնեգի՝ մարդկային հարաբերությունների կարգավորում և ուշադրություն դիմացինի հանդեպ: Սա մեծ արվեստ է՝ լսել ու հասկանալ դիմացինիդ, գնահատել խոսակցիդ, ճիշտ դիրքորոշում ունենալ աշխատակցիդ, գործընկերոջդ, ղեկավարիդ հանդեպ:

Ի՞նչ է ուսուցանում մեզ Սուրբ գիրքը՝ սիրել մերձավորին, անգամ թշնամուն. սերը բովանդակ առաքինություններից մեծագույնն է, առանց որի մեր մոլորակը պաղ ու տարտամ կլիներ:

Եվ երանի բոլոր նրանց, ում հոգում սեր կա՝ բաշխելու մարդկանց, երջանկացնելու նրանց, և ում տրված են ողջախոհությունը, հավասարակշռվածությունը, իրավիճակը ճիշտ գնահատելու կարողությունը և, ընդհանրապես, հոգու առաքինությունները: Եվ կարծում եք՝ բոլո՞րն են օժտված: Երանի թե..., այլ միայն առանձնաշնորհյալները: Ի՞նչ է մեզ ուսուցանում Ոսկի կանոնը. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» (*Մատթ.7:12):*

Երանի թե..., և չէին լինի խարդավանք ու կեղծիք, մուռ ու նենգություն, ցավ ու տառապանք, և երկրի ինտելեկտը կպայմանավորեին սթափությունը, բարությունը, իմաստությունը..., որոնց կարիքը աշխարհը մեծապես ունի:

Եվ տա Աստված, որ մեր երկիրը լիքը լինի միայն օրհնության գործերով, և յուրաքանչյուր մարդու գնահատական հնչի հոգեբուխ, քաղցրալուր ու սրտանց: Եվ ամեն մեկը, որ ունի օժտում, ուժերը նվիրի մարդկանց անվերապահ:

Սա քչերին է հատուկ: Եվ այդ քչերից մեկն էլ Շուշիի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոցի երկարամյա տնօրեն, վաստակաշատ Նազիկ Նալբանդյանն է, որի 65-ամյակը ամբողջացնում է այն առավելագույնը, որի ծաղկապսակը նրան տրված գնահատականն է:

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՈՐԾՆ Է ԱՆՄԱՀ...

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԱՌԱՏՈՒՆԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Քաշաթաղի շրջանի կազմավորումից քիչ անց ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանը հիմնեց «Գուրգեն Մելիքյանը՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» բարեգործական հիմնադրամը, որը գործում է մինչ օրս և շատ օգնություն է ցուցաբերել շրջանին: Բացի բարեգործությունից՝ Գ. Մելիքյանը նույն ժամանակից նաև կազմակերպել է ծառատունկ Բերձորում և հարակից տարածքներում, վերջին ժամանակներում՝ նաև Կովսականում: Այդ ծառատունկի արդյունքում այժմ Բերձորում կան մի քանի պուրակներ՝ նվիրված Երևանի պետական համալսարանին, Մոնթե Մելքոնյանին, Ստեփան Ալաջաջյանին, Լեդի Քոքսին և այլոց:

Նոյեմբերի 2-ին Երևանի պետական համալսարանի շուրջ 80 ուսանողներ Բերձորի հարակից տարածքներում տնկեցին 100 ծառ՝ ընկուզենի և սոսի: Միջոցառումը դարձյալ Գ. Մելիքյանի կազմակերպմամբ էր: Առաջին տունկն սկսվեց Բերդաձոր-Բերձոր հատվածում, որտեղ հիմնվելու է պուրակ: Գ. Մելիքյանն ասաց, որ այն նվիրված է գրող Վահագն Մահտեսի Հակոբյանցին: Ինչպես ընդունված է՝ առաջին ծառը տնկվեց ծառատունկին նվիրված բանաստեղծությամբ, որը սիրում է արտասանել Մելիքյանը:

Ասացվածք՝ ծառ տնկելու առթիվ

Տե՛ր, օրհնե՛ ծառն այս մատղաշ: Ես կտնկեմ զայն ահա

Փխրուն և սև հողին մեջ, ուր պապերս կպառկին.

Ես՝ անոնց թոռը հսկա, այս հողին տերն եմ կրկին,

Ու արևուն տակ կաճիմ՝ անունն իրենց շուրթիս վրա:

Պիտի բանա ծառն այս մեծ իր բազուկներն ու հոգին,

Գրկած իր մեջ պապերուս արևոտ շունչը անմահ,

Տե՛ր, միսմինակ, նազելի, այս ծառն աղոթք մը ըլլա՜,

Ու փաթթվիլ իր մարմնույն գան սիրողները գյուղին:

Երկաթագիր պատմությունն այս մտերիմ հողերուն

Աչքիս արցունք կբերե... փառք ու մեռել շատ ունի:

Երկիրն իմ հին, ալևոր, որուն ես թոռն եմ վայրի,

Խոկումներով բեռնավոր, երազներով օրորուն...

Մեռելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի...

Լևոն-Զավեն Սուրմելյան

Ուսանողներին ուղեկցում էին նաև ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը, ուսանողների հետ

տարվող աշխատանքների բաժնի վարիչ Վահագն Վարագյանը, արհմիության նախագահ Արմեն Ավետիսյանը, ուսխորհրդի նախագահ Ռաֆֆի Քարամյանը, այլ պաշտոնատար անձինք: Ռ. Մարկոսյանն ասաց, որ նախօրեին ուսանողներն այցելել էին շրջանի հարավային թև՝ Կովսական քաղաք, իրականացրել ծառատունկ (տնկել են 20 ծառ) և կազմակերպել միջոցառում՝ նվիրված ազգային հերոս Թաքուլ Կրպեյանին, ում անունով է կոչվում քաղաքի միջնակարգ դպրոցը: Նշեց նաև, որ այս տարիներին միշտ ուղեկցել է ուսանողներին, և կարևորեց այն, որ յուրաքանչյուր այցից հետո շատերն են կապվում Արցախի ու Քաշաթաղի հետ: Միջոցառմանը ներկա էր հերոսի դուստրը՝ Ասպրամը: Կովսականից համալսարանականներն այցելել էին նաև Ստեփանակերտ, այստեղ իրականացրել ցերեկույթ՝ նվիրված Շահեն Մեղրյանի հիշատակին: Շուշիում այցելել էին Ղազանչեցոց եկեղեցի, շրջել քաղաքում: Բերձորում՝ Երևանի պետական համալսարանին նվիրված պուրակում, Գ. Մելիքյանն ասաց, որ տարածքում տարիներ առաջ տնկված ընկուզենիներն արդեն բերք են տվել: Նշեց նաև, որ այսօրվա տնկած սոսիներով լրացվեց քաղաք մտնող մայրուղու մի հատվածի ծառատունկը: Դիմելով ուսանողներին՝ Գ. Մելիքյանը, ով նաև Արցախյան գոյամարտի մասնակից է, ասաց. «Այս բարի գործը կատարելով՝ բոլորն էլ զինվորագրվում են հայրենի երկրի շենացմանը, յուրաքանչյուր տնկված ծառ պարտավորեցնում է, որ իրեն ջրեն ու մշակեն»: Հորդորեց նրանց չլքել հայրենի երկիրը: Ուսանողներից շատերն առաջին անգամ էին Ղարաբաղում և հիացած էին Արցախ աշխարհով: Զրուցակիցներս բոլորն էլ խոստովանեցին, որ ամեն անգամ երբ կազմակերպվի նման միջոցառում, անպայման նորից կգան Արցախ: Թաքուլ Կրպեյանի դուստրն ասաց, որ ինքը հպարտությամբ է յուրաքանչյուր անգամ լինում Արցախում, որի ազատագրման համար հերոսաբար մարտիրոսվեց իր հայրը, երբ ինքը շատ փոքր էր: Ուրախությամբ նշեց, որ իր հայրիկի հիշատակին ուսանողների կազմակերպած ցերեկույթին մասնակցեցին նաև կովսականցի երեխաներ: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողներ Տաթև Նազարյանը, Սյուզի Մսրյանը և Ասյա Հայրապետյանը հիացած էին Արցախի բնությամբ: Տպավորված էին Կովսականի երեխաներով: Ասացին՝ ափսոսում են, որ ավելի շուտ չեն այս տարածքներում եղել: Տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Արման Մանուկյանը նույնպես առաջին անգամ էր Արցախում, իսկ նրա կուրսեցի Ռոզա Ալավերդյանը՝ երկրորդ: Միասին մի քանի տնկի արդեն հողին էին պահ տվել և ուրախ էին, որ այսպես են իրենց ծառայությունը մատուցում տղաների սուրբ արյամբ ազատագրված հողին:

Ծառատունկից հետո կազմակերպվեց ուրախ խնջույք, որի ժամանակ հնչեցին ռազմահայրենասիրական երգեր, կատարվեցին ազգագրական պարեր, հնչեցին կենացներ՝ նվիրված հայրենի հողին, այն ազատագրողին, շենացնողին, պաշտպանողին, այցելողներին, հայ ժողովրդին... Համալսարանականները հրաժեշտ տվեցին Բերձորին՝ հուսալով, որ նման միջոցառումների նորից կմասնակցեն:

Ջոհրաբ ԲՈՔՈՅԱՆ

ԹՌՉՈՒՆԸ ԹԵՎԵՐՈՎ Է ԹՌՉՈՒՄ, ՄԱՐԴԸ՝ ԱՆՈՒՆՈՎ ՈՒ ԳՈՐԾՈՎ

2009 թվականից Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի հ.1 միջնակարգ դպրոցը կրում է արևմտահայ բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական գործիչ Վահան Թեքեյանի անունը: Օրերս դպրոցը հյուրընկալեց ՀՀ Թեքեյան մշակութային միության նախագահ Գայանե Մուրադյանին, ով դպրոցի ուսուցիչների և ամբողջ աշխատակազմի համար կազմակերպել էր հերթական բարեգործական ակցիան՝ «Ուսուցիչ մը հովանաւորէ» ծրագրի շրջանակներում դրամական օգնության տրամադրում: Շուրջ 6 տարի է, ինչ ավանդույթ են դարձել նման ջերմ այցելությունները: Այս անգամ հանդիպումը սրտառուչ էր, աստվածահաճ, և ավանդական դարձած այցը խորհուրդ ուներ: Դպրոցի տարեգրության մեջ նշանակալի մեկ էջ ևս ավելացավ... Այցը արժևորեց հարազատ կրթօջախի 20- ամյակը: Սա մեզ հպարտանալու առիթ է տալիս: Իսկ հպարտությունը բազմապատկվում է, երբ կողքիդ բարեկամ ունես, իսկ բարեկամ ձեռք բերելու ամենադյուրին ճանապարհը մեր ունեցածի, լավագույնի, մեր սրտի նվիրումն է: Առավել գնահատելին մեր հանդեպ ուշադրության այն դրսևորումն է, այն վերաբերմունքը, որ ցուցաբերում է ԹՄՄ-ն: «Այդ բարեկամությունը մի հուսալի կամուրջ է մեր և Ձեր միջև: Իսկ որտեղ կա սեր ու նվիրում, բացվում են նորանոր հնարավորություններ»,- ասաց դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Սահակյանը:

Դպրոցի պատմության ուսուցչուհի Կարինե Հովհաննիսյանը երախտագիտությամբ նշեց. «Ոչ մի բան մարդուն չի դարձնում այնպես մեծ ու իմաստուն, ինչպես կոլեկտիվ, համերաշխ աշխատանքի ուժը: Անշուշտ, այդ ուժը մենք ստանում ենք դպրոցում, որը մեր երկրորդ տունն է, և դրանով մենք հպարտ ենք ու հպարտ ենք նաև նրանով, որ մեր դպրոցը կրում է Թեքեյան ազգանունը: Մենք շնորհակալ ենք Թեքեյան միության անդամներից և համակիրներից, որ սատարում են մեզ նյութապես և, որ ամենակարևորն է, բարոյապես»:

ԹՄՄ նախագահ Գ. Մուրադյանն ասաց, որ համագործակցությունը կլինի շարունակական, և որ այս ընթացքում իրարից շատ բան սովորեցին և շատ բան փոխանցեցին միմյանց:

Դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը բոլորին մաղթեց հաջողություններ իրենց աշխատանքային գործունեության մեջ՝ կարևորելով նման հանդիպումների անհրաժեշտությունը, մարդասիրական արարքը, որով նրանք օրինակ են ծառայում մարդկանց և ցույց տալիս դեպի բարություն տանող ճանապարհը:

Սիրվարդ ԹԱՄԱՋՅԱՆ
Բերձորի Վ. Թեքեյանի անվան դպրոցի ուսուցչուհի

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՍ

ԲԱԶԱԶ ԱՐՏԵՄԻ ԴԱՏԸ

Վեցերորդ դասարանում արտադասարանական ընթերցանության հերթական թեման Մեծ լոռեցու անզուգական «Գիքորը» պատմվածքն էր:

Չեմ հիշում մի այլ ստեղծագործություն, որն այդքան շատ ընթերցած լինեի, բայց ամեն անգամ էլ համարյա նույն զգացումներն ու մտքերն են ինձ համակում ու ստիպում մտորել, հուզվել…

Երբ աշակերտներն ընթերցեցին պատմվածքը, գրական խմբակի ժամին դիտեցինք ռեժիսոր Ս.Իսահակյանի «Գիքորը» ֆիլմը, զուգահեռներ անցկացրինք մերօրյա գիքորների և բազազների միջև:

Թերևս եզակի են այն դեպքերը, երբ գրական ստեղծագործությունը և նրա հիման վրա նկարահանված ֆիլմը նույն ազդեցությունն են գործում մարդու վրա: Ազդեցիկ է «Գիքորը» ֆիլմը, և այն աշակերտներից շատերի աչքերից արցունքներ քամեց: Հերթական անգամ ֆիլմը դիտելիս ես հուզվեցի արդեն աշակերտների հուզմունքից, նրանց անմիջականությունից ու անկեղծությունից:

Խորամանկ ու դաժան բազազ Արտեմի դեմ վեցերորդցիները չարացան, իսկ իմ այն հարցին, թե՝ եթե դատավոր լինեիք, ինչպե՞ս կդատեիք նրան, առաջ քաշեցին տարբեր տեսակետներ: Իմ մեջ միտք հղացավ դաս-դատ կազմակերպելու, և ես նախաձեռնեցի՝ դատավճռի հիմքում ունենալով աշակերտների կայացրած որոշումներից մի քանիսը: Այն հարցին, թե որ հերոսին կցանկանային տեսնել հայցվորի դերում, աղջիկները պատասխանեցին՝ Նանիին, քանի որ չէին ուզում հայ մորը տեսնել թշվառ և իրավազուրկ: Ինձ մնում էր միայն ավելացնել գործող անձանց քանակը, որպեսզի դասարանի յուրաքանչյուր աշակերտ մասնակցի դաս-դատին:

Համարձակվում եմ ընթերցողների դատին ներկայացնել «Բազազ Արտեմի դատը»

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Հայցվոր՝ Գիքորի մայրը, պատասխանող՝ Բազազ Արտեմ, Համբո, Նանիի դատապաշտպան, Բ.Արտեմի դատապաշտպան, Նատո, Դեդի, Վասո, գյուղացի երկու կին, ոստիկան, քարտուղար, դատավոր

Քարտուղար - Ոտքի՛, դատարանն է գալիս:

Դատավոր - Այսօր՝ 2014թ. փետրվարի 19-ին, լսում ենք քաղաքացիական մի գործ՝ Գիքորի մոր՝ Նանիի հայցը՝ Բազազ Արտեմին պատժելու խնդրանքով:

Պատասխանող Բազազ Արտեմ, ընդունո՞ւմ եք հայցը:

Բ.Արտեմ - Ո՛չ, չեմ ընդունում:

Դատավոր - Այժմ անցնում ենք գործի քննությանը: Նախ լսում ենք հայցվորին:

Նանի - Պարո՛ն դատավոր, մենք ծայրահեղ աղքատ վիճակում էինք: Ամուսինս՝ Համբոն, որոշեց տասներկու տարեկան որդուս՝ Գիքորին, տանել քաղաք, բայց ես չէի ուզում: Վկա են հարևաններս:

Դատավոր - Ներս բերել հարևաններին:

Առաջին կին - Պարո՛ն դատավոր, վկա է Աստված, մայրը չէր ուզում: Նա լաց եղավ, կռվեց, բայց Համբոն չլսեց, տարավ երեխին:

Երկրորդ կին - Այդ խաղաղ ու տխուր առավոտը մենք դուրս եկանք մինչև գյուղի ծերը, պաչեցինք Գիքորի թշերը և ճամփու դրինք: Երբ Նանին, Զանին և Գալոն լաց եղան, մենք էլ լացեցինք:

Դատավոր - Այժմ լսենք Գիքորի հորը՝ Համբոյին:

Համբո - Հարգելի՛ դատավոր, ես մեղավոր եմ, կինս չէր ուզում: Էդ ես որոշեցի քորփա երեխիս տանել քաղաք: Ախր մեր դրությունը շատ վատ էր: Մտածում էի՝ մի քիչ փող կաշխատի, մեզ կօգնի, համ էլ աշխարհ կտեսնի, մեզ նման խեղճ ու կրակ չի մնա: Հարգելի՛ դատավոր, էդ ես եմ մեղավորը, ինձ էլ պատժեք*(հուզվում է)*:

Դատավոր - Հանգստացե՛ք, պարո՛ն և զբաղեցրե՛ք Ձեր տեղը: Այժմ խոսքը տրվում է մեղադրյալին:

Բ.Արտեմ - Ես Ավետարանի վրա երդվում եմ, որ պետք է ասեմ միայն ճիշտը:

Հարգարժա՛ն դատավոր, Աստծու մի օր ես բազարում տեսա էս մարդուն իր տղայի հետ անցնելիս: Մոտեցա, հարցուփորձ արի: Հերն ասաց, որ տղուն ծառա է տալիս: Ես առաջարկեցի բերել իմ տուն: Պայման կապեցինք, որ Գիքորը պետք է տունը մաքրի, ամանները լվանա, ոտնամանները սրբի, փեչը վառի, դուքանը բաժին տանի ու էս տեսակ մանր ծառայություններ: Այսպես մինչև մեկ տարի: Մի տարուց հետո պիտի տանեի դուքան, շինեի դուքանի աշակերտ: Պայմանի մեջ մտնում էր էն, որ հինգ տարի դեռ փող չպիտի տամ: Ախր էրեխեն ոչինչ չգիտեր, դեռ ինքը պիտի ինձ փող տար:

Դատավոր - Քաղաքացի՛ Համբո, Բազազ Արտեմը ճի՞շտ է ասում:

Համբո - Հա, դրուստ է ասում: Տեղս նեղ էր, ու էդ պայմանին էլ համաձայնեցի: Բայց դե չէի պատկերացնում, որ որդիս կհիվանդանա ու կմեռնի: Երբ բազազ Արտեմը ապսպրեց, որ էրեխեն հիվանդ է, ես եկա հիվանդանոց: Գիքորս տաքության մեջ զառանցում էր և ինձ չճանաչեց: Ձեռս տվին երեխու շորերը, բերեցի մորը տվի: Մերը լաց եղավ, ամա չլռեց, ասաց, որ պիտի դատի տա բազազին ու իր խոսքն արավ:

Նանի - Պարո՛ն դատավոր, բազազ Արտեմն է սպանել իմ որդուն: Խնդրում եմ՝ արդար դատեք և պատժեք նրան: Մահապատժի՛ ենթարկեք նրան: Իմ քորփա էրեխեն անմեղ էր…*(լաց է լինում)*:

Դատավոր- Հանգստացե՛ք, տիկի՛ն: Զբաղեցրեք Ձեր տեղը: Ներս բերեք Բ.Արտեմի կնոջը, մորը և աշակերտ Վասոյին: Մայրի՛կ, ի՞նչ կարող եք ասել:

Դեդի - Պարո՛ն դատավոր, խեղճ ու կրակ էրեխա էր: Սիրտս ցավում էր: Արանքում խորհուրդներ էի տալիս, ծածուկ կերակրում էի, իսկ երբ հիվանդացավ, ջուր էի տալիս, թրջոցներ էի դնում ճակատին: Խեղճը ջուրը խմում էր ու ասում. «էս սիրտս չի հովացնում, դեդի, ես մեր աղբյուրի սառը ջրիցն եմ ուզում, ես իմ նանին եմ ուզում»: Որ հիշում եմ, սիրտս մղկտում է: Ամա, պարո՛ն դատավոր, ո՛չ Արտեմս, ո՛չ էլ հարսս մեղավոր չեն Գիքորի մահվան մեջ, նրանք էրեխու մահը չէին ուզում: Դե, հիմի էդպես ստացվեց: Նրա ճակատի գիրն էլ էդպես էր գրված:

Դատավոր - Դո՞ւք ինչ կասեք, քաղաքացի՛ Վասո:

Վասո - Գիքորը մի օր ինձ ու խազեինիս սոված թողեց: Խազեինը պատժեց նրան՝ հրամայելով երեկոյան սոված մնալ: Ես մեղքացա, ծածուկ մի քիչ հաց ու պանիր տվի, որ ուտի: Պարո՛ն դատավոր, Գիքորը շատ միամիտ էր: Նա չհասկացավ, որ չի կարելի հյուրերի ներկայությամբ ասել, թե՝ խազեինն ասել է՝ բալը թանկ է, հարկավոր չէ:

Նատո *(ջղայնացած)* - Հարգարժա՛ն դատավոր, էս գյուղացի անճարակին ես էն գլխից պիտի պատժեի: Ախր խալխի մոտ ինձ մասխարա արեց: Հերիք չէր, որ դռան զանգը տվողին հարցնում էր՝ ի՞նչ եք անում աղջիկ պարոնին, և բոլորը ծիծաղում էին, հետն էլ եկավ նրանց մոտ կանգնեց, թե՝ խազեինն ասաց՝ բալը թանկ է: Հազար անգամ ամուսնուս մոտ լաց եղա, ասի՝ սրա կատարած գործը ես կանեմ, Արտե՛մ, արձակի գնա՛, չլսեց: Ասաց՝ մեղք ա, թող մնա, մարդամեջ ընկնի, բան սովորի:

Պարո՛ն դատավոր, ամուսինս մեղավոր չէ նրա մահվան մեջ: Խնդրում եմ նրան չմեղադրել:

Դատավոր - Այժմ խոսքը տալիս ենք Բազազ Արտեմի դատապաշտպանին:

Դատապաշտպան - Պարոն դատավո՛ր, իմ պաշտպանյալը մեղավոր չէ: Նա գործել է օրենքի շրջանակում: Բազազ Արտեմը բռնությամբ չէ, որ Գիքորին ծառա է վերցրել: Հայրն է որդուն բերել քաղաք և տվել նրան: Բ.Արտեմը կերակրել է Գիքորին, շորեր է հատկացրել, քնելու տեղ տվել: Գիքորի արտաքին տեսքն այնքան լավ էր, որ Համբոյի նամակը բերող գյուղացիները, տեսնելով Գիքորին, նախանձել են, որ իրենց որդիներին էլ չեն քաղաք բերել: Բ.Արտեմը մեղավոր չէր, որ Գիքորը չհասկացավ, որ հարուստների շրջապատում պետք է նաև խաբել, ձևանալ: Երբ Գիքորը հիվանդացավ, Բ.Արտեմը հոգ տարավ, դեդին խնամեց: Ի վերջո, նրան տեղափոխեց հիվանդանոց, բժշկին փող տվեց, տեղեկացրեց Համբոյին:

Հարգելի՛ դատավոր, խնդրում եմ այս ամենն ընդունել իբրև մեղմացուցիչ հանգամանքներ:

Նանի *(նստած տեղից)* – Հարգելի՛ դատավոր, ես սպասում եմ Ձեր արդար վճռին: Ես հավատում եմ արդարությանը (հուզվում է):

Նանիի դատապաշտպան - Ներեցե՛ք, հարգելի՛ դատավոր, իմ պաշտպանյալը հուզվում է, ես կարո՞ղ եմ խոսել:

Դատավոր - Խնդրեմ, խոսքը Ձերն է:

Ն.դատապաշտպան -Հարգարժա՛ն դատավոր, բոլորն էլ տեղյակ են, որ ընտանեկան ծանր հոգսերը թեթևացնելու նպատակով գյուղացի Համբոն իր տասներկու տարեկան Գիքորին տարավ քաղաք: Նա միամիտ էր, քաղաքի կեղտոտ բարքերին և բիզնեսի աշխարհին՝ անտեղյակ: Համբոն չգիտեր, թե ինչ էր սպասում իր որդուն, չէր պատկերացնում, որ վատ կվարվեն իր որդու հետ: Չի կարելի անպատիժ թողնել Բազազ Արտեմի նման անհոգի մարդկանց: Գիքորը՝ այդ միամիտ գեղջուկ երեխան, դժվար էր յուրացնում քաղքենի աշխարհի կեղծավորությունը, չի գիտակցում, թե ինչու են պատժում իրեն. չէ՞ որ ինքը չէր ստել, ասել էր միայն ճշմարիտը: Մի՞թե կարելի է սոված երեխային հացից զրկել: Նա դեռ ծնողական հոգատարության ու գուրգուրանքի կարոտ էր: Մի՞թե կարելի չէր հիվանդ երեխային ժամանակին տեղափոխել հիվանդանոց: Ես բողոքում եմ և պահանջում եմ արդար դատել Բազազ Արտեմին: Նրան պետք է ցմահ բանտարկել:

Դատավոր - Պատասխանող կո՛ղմ, այսքանից հետո Ձեզ մեղավոր ճանաչո՞ւմ եք:

Բազազ Արտեմ - Ո՛չ, ես մեղավոր չեմ Գիքորի մահվան մեջ:

Դատավոր - Դե ինչ, դատարանը հեռանում է վճիռ կայացնելու:

Քարտուղար - Ասում են՝ արդարությունը այնքան արժեքավոր բան է, որ ոչ մի դրամով չես գնի: Իսկ թե ինչ վճիռ է կայացրել դատարանը, հիմա կիմանաք:

Ոտքի՛, դատարանն է գալիս:

Դատավոր - Լսելով կողմերի ցուցմունքները, ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ Ղ.Ճարտարի Արա Ավանեսյանի անվան հիմնական դպրոցի 6-րդ դասարանի դատարանը որոշեց.

1.Բազազ Արտեմը պարտավոր է հոգալ Համբոյի ընտանիքի ծախսերը մինչև փոքրիկ Գալոյի չափահաս դառնալը:

2.Բազազ Արտեմը պետք է իր սեփական միջոցներով գյուղում բացի տարրական դպրոց, ուր պետք է անվճար սովորեն աղքատ ընտանիքների երեխաները: Նրանք պետք է դպրոցում նախաճաշ և ճաշ ստանան:

3.Բազազ Արտեմը պարտավորվում է այլևս ոչ մի միամիտ գյուղացու չխաբել և չշահագործել ոչ մի անչափահաս երեխայի:

4.Նշված պարտականությունները չկատարելու դեպքում Բազազ Արտեմի սեփականությունը կբռնագրավվի և կհանձնվի Համբոյի ընտանիքին:

Վճիռը վերջնական է և ենթակա չէ վերանայման կամ բողոքարկման:

Դատավարությունը համարվում է ավարտված:

ՕՖԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Ղ.Ճարտարի Արա Ավանեսյանի անվան հիմն.դպրոցի հ.լ. եւ գրակ. ուսուցչուհի

Շնորհավորանք

ՍՐՏԻ ԽՈՍՔ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋԸ

Լրացավ վաստակաշատ մանկավարժ Ռոմելա Սահակյանի ծննդյան 60 տարին: Եռանդուն, անսահման մեծ հոգու տեր ուսուցչուհի Ռոմելա Սահակյանին ճանաչում են որպես լավ մարդու, լավ մասնագետի և իր հաստատուն կենսակերպն ունեցող քաղաքացու:

Ծնվել է Մարտունու շրջանի Գիշի գյուղում, բազմազավակ ընտանիքում: Մյուս երեխաներից դեռ փոքրուց տարբերվում էր երևակայական մտածողությամբ, ամեն գործում լավը տեսնելու ընդունակությամբ:

1972 թ. ավարտելով Գիշու միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժության և տարրական կրթության մեթոդիկա» բաժինը, որը շարունակել ու ավարտել է Ստեփանակերտում: Աշխատանքի է անցել Խնուշինակի, ապա Ճարտարի միջնակարգ դպրոցներում: 1981-ից առայսօր աշխատում է Գիշու միջնակարգ դպրոցում: Ամուսինը՝ Արմոն՝ ազգային-ազատագրական պայքարին մասնակցած քաջորդին, որն ապրեց ընդամենը 39 գարուն. մարտիրոսվել է Արցախյան հերոսամարտում՝ ընտանիքի հոգսը թողնելով կնոջ ուսերին: Ռոմելան արժանապատվությամբ, մեծ հոգատարությամբ ու եռանդով մինչև օրս հոգում է իր ընտանիքի հոգսերը և անսահման սիրով ու նվիրվածությամբ կրթում, դաստիարակում է իր սաներին:

Աշխատանքային բեղուն գործունեության ընթացքում ուժ ու եռանդ չի խնայում, նվիրումով ու պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը:

Լավ մանկավարժ է, լավ գործընկեր, սիրասուն մայր, հոգատար տատիկ, դաստիարակել է երեք երեխաների՝ խելացի ու համեստ:

Գիշու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խորին ակնածանքով շնորհավորում է սիրելի գործընկերոջը հոբելյանի առթիվ, ցանկանում առողջություն, դարաբաղյան երկարակեցություն:

Թո՛ղ կյանքիդ յուրաքանչյուր օրը զվարթ ու պայծառ, ուրախ ու երջանիկ լինի:

Գիշու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2013-14 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիտելիքն ու կրթությունն ամենաթանկ կապիտալն է, առաջընթացի ապահովման կարևոր նախապայմանը: Այդ ամենն արժանավայել սերունդներին փոխանցելը վերապահված է դպրոցին և ուսուցչին:

2013-2014 ուստարում Շուշիի շրջանում գործել են 1 ավագ, 4 միջնակարգ և 3 հիմնական դպրոցներ, որտեղ ընդգրկված է եղել 681 աշակերտ՝ 57 դասարան կոմպլեկտներում:

Բոլոր դասարան կոմպլեկտներում դասավանդել են 150 ուսուցիչներ, որոնցից 131-ը՝ բարձրագույն, 19-ը՝ միջնակարգ-մասնագիտական կրթությամբ: Շուշիում գործում են նաև Դանիել Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական դպրոցը՝ 12 դասարանով, 105 աշակերտների ընդգրկմամբ, և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը՝ 15 անուն 23 խումբ- խմբակներով՝ 230 աշակերտների ընդգրկմամբ: Շրջանում գործող 3 մանկապարտեզներից մեկը՝ Քարինտակ գյուղում (գործում է պետական կարգավիճակով՝ 28 երեխաներով), 2-ը՝ Շուշիում՝ Ավետարանչական կազմակերպության հովանավորությամբ՝ 70 երեխաների ընդգրկմամբ և ՀՕՄ-ի հովանավորությամբ՝ 58 երեխաների ընդգրկմամբ: Խ.Աբովյանի անվան հիմնական և Դ. Ղազարյանի անվան դպրոցներում գործել են նախապատրաստական խմբեր՝ համապատասխանաբար 28 և 17 երեխաների ընդգրկմամբ:

2013-14 ուստարվա տարեվերջի աշակերտների շարժի հաշվետվությունների համաձայն՝ 20 աշակերտ մնացել է վերաքննության, 2-ը մնացել են դասընթացը կրկնելու նույն դասարանում, ընդունվել են դպրոցներ 13 աշակերտներ, դուրս են եկել 23-ը: Դուրս եկողների հիմնական պատճառը շրջանից դուրս այլ բնակության վայր տեղափոխվելն է:

2013թ. սեպտեմբերին բոլոր դպրոցներում կատարվել են ուսուցիչների տարիֆավորում, ինչպես նաև դպրոցների աշակերտների մասին հաշվետվությունների պատրաստման աշխատանքներ:

Գյուղական բնակավայրերի դպրոցները բարձրագույն կրթությամբ մասնագետներով համալրելու նպատակով հայտարարվել և անց են կացվել մրցույթներ: Արդյունքում դպրոցները համալրվել են 4 մասնագետ ուսուցիչներով:

Շրջվարչակազմի ղեկավարի գլխավորությամբ կազմակերպվել և հանդիսավոր նշվել է Ուսուցչի օրը:

Ձմռան նախապատրաստական աշխատանքներ են կատարվել շրջանի բոլոր հանրակրթական դպրոցներում: Դպրոցներից 3-ը ջեռուցվել են գազով՝ Մուրացանի անվան ավագ, Քարինտակի և Եղծահողի միջնակարգ դպրոցներ: Խ. Աբովյանի անվան, Դ. Ղազարյանի անվան և Հինշենի դպրոցները ջեռուցվել են նոր համակարգով: Որոշակի թերություններ են եղել Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի ջեռուցման հետ կապված, իսկ Դ. Ղազարյանի անվան դպրոցում ջեռուցման համակարգին զուգահեռ օգտագործվել են վառարաններ: Նոր ուսումնականի նախաշեմին նաշխատանքներ են տարվել այդ թերությունները վերացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ քանակությամբ վառելափայտ է մթերվել գյուղական վայրերի 3 դպրոցների համար:

Տարեվերջին 1-6-րդ դասարանների աշակերտների համար ամանորյա նվերներ են ստացվել ԿԳ նախարարությունից և բաժանվել դպրոցներին: 7-12-րդ դասարանների աշակերտներին և մանկապարտեզների երեխաներին նվերներ են բաժանվել շրջվարչակազմի ղեկավարի կողմից: Բոլոր դպրոցներում կազմակերպվել և անց են կացվել ամանորյա միջոցառումներ:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դպրոցներում կատարվել է նյութական արժեքների գույքագրում:

Շրջանի բոլոր դպրոցներում գործում են համակարգչային կաբինետներ: Քիրսավանից բացի բոլոր դպրոցները միացված են համացանցին: Ուշադրության կենտրոնում է գտնվել ուսման որակի բարձրացման հարցը: 2013-14 ուստարին դպրոցները եզրափակել են 99,6 % առաջադիմությամբ, 32,2 % որակով: Իհարկե, ուսման որակի բարձրացման հարցը ներկա դրությամբ կարևորագույն խնդիրներից է: Համոզված կարելի է ասել, որ պահանջկոտության և բարեխիղճ աշխատանքի դեպքում կարելի է հասնել ավելի մեծ արդյունքների:

Հպարտությամբ կարելի է փաստել, որ Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի 2009-2010 ուստարվա շրջանավարտներ Սուսաննա Հարությունյանը, Լիլիթ Մինասյանը և Անուշ Պետրոսյանը ԱրՊՀ-ն ավարտել են գերազանց գնահատականներով և այդ առիթով ԼՂՀ Նախագահի կողմից պարգևատրվել թանկարժեք նվերներով:

Բոլոր դպրոցներում կազմակերպված գործում է «Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպությունը: Բոլոր դպրոցները աշխատանքներն սկսում են առավոտյան մարմնամարզությամբ, իսկ երկուշաբթի օրը՝ ԼՂՀ, որոշ դպրոցներում նաև ՀՀ հիմների հնչեցմամբ:

Բաժնի կողմից վերահսկվում են դպրոցներում իրականացվող աշխատանքները: Տարվա ընթացքում բաժնի աշխատողները այցելություններ են կատարել դպրոցներ, տեղերում քննարկել տարբեր հարցեր:

Շրջանի բոլոր դպրոցներում գործել են առարկայական մեթոդմիավորումներ, որոնք աջակցել են ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանը:

Բոլոր դպրոցներում մեթոդմիավորումների կողմից կազմակերպվել են բաց դասեր, դաս-միջոցառումներ, մանկավարժական ընթերցումներ, լույս ընծայվել պատի թերթեր: Խ. Աբովյանի անվան հիմնական և Եղծահողի միջնակարգ դպրոցներում անց են կացվել մեթոդմիավորման փնջային նիստեր, որտեղ կազմակերպվել են բաց դասեր, լսվել զեկուցումներ: Նիստերի աշխատանքներին ներկա են եղել Կրթության և գիտության նախարարության պատասխանատու աշխատողներ:

Մանկավարժական ինքնակրթության և լավագույն փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են մանկավարժական ընթերցումներ և մանկավարժական զեկուցումներ: ԿԳ նախարարության կողմից ստուգվել է դպրոցների տնօրենների և փոխտնօրենների կողմից կատարված դասալսումների քանակն ու որակը: Դասալսումները հիմնականում համապատասխանում են պահանջվող քանակին և որակին: Անբավարար են գնահատվել Եղծահողի միջնակարգ դպրոցի տնօրենի դասալսումները:

Տարվա ընթացքում ապահովվել է շրջանի ուսուցիչների մասնակցությունը նախարարության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Ժամանակին ճշտվել և ԳԹԿ են ներկայացվել միասնական, պետական ավարտական և ավարտական քննություններին մասնակցող աշակերտների ցուցակները:

ԳԹԿ-ի կողմից շրջանի դպրոցների տարբեր դասարաններում անց են կացվել արտաքին ընթացիկ գնահատում և փորձնական քննություններ տարբեր առարկաներից: Դեկտեմբեր ամսին արտաքին ընթացիկ գնահատմանը ընդգրկվել են 239 աշակերտներ, մարտին՝ 191:

Բոլոր դպրոցներում տնօրինության կողմից նույնպես տրվել են ստուգողական աշխատանքներ, որոնց արդյունքները վերլուծվել, տրվել են գնահատականներ, ստուգվել առանձին առարկաների դրվածքը:

Մայիսին ԿԳ նախարարության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել Լիսագորի միջնակարգ դպրոցում: Ստուգումների արդյունքում դպրոցի աշխատանքները գնահատվել են բավարար:

Հունվարին հանրակրթական դպրոցներում կազմակերպվել է առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլը, փետրվարին՝ շրջանային, որին մասնակցել են 103 աշակերտներ: Շրջանի գյուղական վայրերի դպրոցների աշակերտները նույնպես ակտիվորեն են մասնակցել օլիմպիադայի շրջանային փուլին: Հաղթող ճանաչված 19 աշակերտներ մասնակցել են օլիմպիադայի հանրապետական փուլին, որտեղ Մուրացանի անվան ավագ դպրոցի երկու աշակերտներ պարգևատրվել են ակտիվ մասնակցության համար:

Շրջանում կազմակերպվել և անց է կացվել «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթը:

Շրջանի դպրոցների աշակերտները ակտիվորեն մասնակցել են ստեղծագործական շարադրությունների և ասմունքի տարբեր մրցույթների հանրապետական փուլերին, որտեղ Արցախյան շարժմանը նվիրված ասմունքի մրցույթում Մուրացանի անվան ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Ավանեսյանը պարգևատրվել է ակտիվ մասնակցության համար: Գյումրիում անցկացված երաժիշտ կատարողների «Վերածնունդ» միջազգային փառատոնին մասնակցել են Դ. Ղազարյանի անվան դպրոցի աշակերտներ Շամիկ Սարգսյանը՝ արժանանալով 2-րդ մրցանակի ու արծաթե մեդալի, և Արսեն Սաֆարյանը՝ արժանանալով ժյուրիի բարձրագույն մրցանակին:

Բարձր մակարդակի վրա է արտադասարանական աշխատանքների կազմակերպման դրվածքը շրջանի բոլոր դպրոցներում և Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում: Կազմակերպվել և անց են կացվել «Գիտունիկ» ինտելեկտուալ խաղի և «Լավագույն աշակերտ» մրցույթի շրջանային փուլերը, և ապահովվել է թիմերի մասնակցությունը հանրապետական մրցումներին: Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Արցախյան շարժման հերոսների հիշատակին, տոն և հիշատակի օրերին: Դպրոցների աշակերտները և կենտրոնի սաները ակտիվորեն մասնակցել են շրջանային և հանրապետական միջոցառումներին: ՄՊՍԿ սաները իրենց աշխատանքներով ակտիվորեն մասնակցում են հանրապետական ցուցահանդեսներին և փառատոներին: Բաժնի աշխատանքային պլանով նախատեսված բոլոր միջոցառումներն ու մրցույթները կազմակերպվել և անցկացվել են ժամանակացույցի համաձայն:

Դպրոցներում մեծ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությանը: Ըստ նախօրոք հաստատված կարգացուցակների՝ աշակերտները հանդիպումներ են ունեցել դպրոցներին կցված զորամասերի հետ, ծանոթացել զինվորական կյանքին ու կենցաղին: Շրջանի զինղեկները մասնակցել են Կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Ապրիլ ամսին անց է կացվել «Արծվիկ» ռազմամարզական խաղերի շրջանային փուլը, որտեղ հաղթող ճանաչված Քարինտակի միջնակարգ դպրոցի թիմը մասնակցել է խաղերի հանրապետական փուլին:

Շրջանի մարզական թիմերը մասնակցել են հանրապետական բոլոր մրցումներին: Հանդբոլի պատանիների թիմը հանրապետական առաջնությունում գրավել է երկրորդ տեղը, բասկետբոլի աղջիկների թիմը՝ 3-րդ: Դ. Ղազարյանի անվան դպրոցի աշակերտ Սերգեյ Հարությունյանը թեքվանդոյի գծով ԼՂՀ առաջնությունում արժանացել է ոսկե մեդալի, իսկ ՀՀ-ում գրավել 3-րդ տեղ:

Հունիս ամսում դպրոցներում 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտները քննություններ են հանձնել 4-րդում՝ երկու, 9-րդ և 12-րդում՝ վեց առարկաներից: Բացի 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» առարկաներից, որոնց քննությունները կազմակերպվել են կենտրոնացված՝ Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի քննական կենտրոնում, մնացած բոլոր քննությունները անց են կացվել և ստուգվել դպրոցներում: Ավարտական քննություններ են հանձնել 56 աշակերտներ, որոնցից 6-ը՝ մաթեմատիկայից, 9 աշակերտներ հայոց լեզվից մնացել են վերաքննության: 12-րդ դասարանը ավարտել են 30 աշակերտներ, որոնցից 20-ը մասնակցել են միասնական քննություններին: 6 աշակերտներ ընդունվել են ԱրՊՀ առկա բաժիններ, որից 3-ը՝ անվճար: Դ. Ղազարյանի անվան մասնագիտացված դպրոցի մեկ աշակերտ ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դիրիժորական բաժինը: Հուլիս ամսին շրջանի դպրոցների 10-րդ դասարանի տղաները մասնակցել են ԿԳ նախարարության կողմից կազմակերպված «Ասպետ» ռազմամարզական ճամբարին:

Օգոստոսին փաստաթղթային ատեստավորման են ենթարկվել 19 ուսուցիչներ:

Ընթացիկ վերանորոգման համար նախատեսված գումարով վերանորոգման աշխատանքներ են կատարվել շրջանի գյուղական վայրերի դպրոցներում: Կապիտալ ներդրումների պետական ծրագրով հիմնանորոգվել է Մեծշենի միջնակարգ դպրոցի տանիքը, «Հայաստան համահայկական հիմնադրամի» կողմից հիմնանորոգվել և կահավորվում է Քարինտակի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը, իսկ Բուենոս- Այրես քաղաքի հայկական դպրոցների աշակերտների հանգանակությամբ ավարտին են հասցվել նույն դպրոցի ակումբի վերանորոգման աշխատանքները: Հաշվի առնելով, որ ձմռանը քամիների պատճառով հնարավոր չէր լինում վառարանները վառել և նորմալ դասապրոցես ապահովել Լիսագորի միջնակարգ դպրոցում՝ կապիտալ ներդրումների պետական ծրագրով «Բաքսի» տիպի ջեռուցման համակարգ է տեղադրվել դպրոցում և կատարվել վերանորոգման աշխատանքներ: Մեծշենի միջնակարգ և Քիրսավանի հիմնական դպրոցների համար ձեռք են բերվել վառարանների 15 կոմպլեկտ և անհրաժեշտ քանակությամբ վառելափայտ: Շրջանի բոլոր դպրոցները հիմնականում ապահովված են նոր գույքով, դասագրքերով և մեթոդական ձեռնարկներով: Մարզագույքի ձեռք բերման անհրաժեշտություն կա:

Հաշվետու ժամանակաշրջանում կրթության բաժինը գործուն աջակցություն է ստացել և՛ նախարարությունից, և՛ շրջանի վարչակազմից:

Ի. ՍԱՐԳՍՅԱՆ
Շուշիի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԲԱՌԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ

Հայ ժողովրդի պատմության անցած ուղու մշտական վկան հայոց լեզուն է: Լեզվի բառապաշարը վկայում է, որ վաղնջական ժամանակներում հայ ժողովուրդը տարածված է եղել և ունեցել է հարևաններ: Հայտնի է նաև, որ ինքնուրույն կյանք վարող ժողովուրդը հարաբերություն է ունեցել նաև այլ ժողովուրդների հետ, կրել բազմաթիվ ազդեցություններ, ինքն էլ իր հերթին ազդել ուրիշների վրա: Փոխազդեցություններն առաջին հերթին կրում է լեզուն՝ իբրև հաղորդակցման կարևորագույն միջոց: Լեզվական այդ փոխազդեցությունները, բառապաշարի շերտերը պահպանել ու մեզ է հասցրել լեզուն:

Հայոց լեզվի հարուստ բառապաշարն ուսումնասիրողը կգտնի բառեր, դարձվածքներ, որոնց ծագումն ու իմաստը հասնում են մինչև վաղնջական ժամանակներ և կրում են հայոց դիցաբանության հետքերը:

Ղարաբաղի բարբառը, որպես գրական հայերենի խոսակցական տարբերակ, պահպանել է մի շարք նման բառեր, դարձվածքներ, որոնք համարյա գործածական չեն գրական հայերենում և խոսում են հայ ժողովրդի միասնական լինելու, սովորույթների ու հավատալիքների մասին:

Փորձենք տալ Ղարաբաղի գործածական առօրյա բառապաշարին հատուկ այդպիսի մի քանի դարձվածքների իմաստն ու ծագումը:

1. ***Իշակյուլ*** - գործածվում է համարձակ, աներկյուղ իմաստներով: *(Նա հենցա իշակյուլ լինի, մեռալը մենակ բիջարեց)*:

Ինչպես գիտենք, հայոց դիցարանն ունի Մարդագայլ հերոսուհին՝ կնոջ արտաքինով, գայլի էությամբ: Ավանդույթներից մեկի համաձայն՝ Մարդագայլը հարձակվում է հոշոտելու իր հյուրին, որն իր տեսքով գրգռել է նրա ախորժակը: Սակայն հյուրը արագ կողմորոշվում է, սրով հարվածում է նրա կրծքին, և կաթի շիթերը ցրվելով առաջացնում են Ծիր Կաթին համաստեղությունը:

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Ղարաբաղի բարբառում իշակյուլ բառով բնութագրվում են հատկապես կանայք, ապա կհամոզվենք, որ բառն իր իմաստով համարժեք է Մարդագայլին: Պիտի ավելացնել նաև այն, որ իշակյուլ բառն ունի նաև համարձակ, աներկյուղ, խելացի իմաստները:

2. ***Իշակյուլ*** բառին համարժեք բարբառը գործածում է նաև ***Կյուլու սերտ կերած*** դարձվածքը: Ունի քաջ, համարձակ, աներկյուղ իմաստները: *(Հենցա կյուլու սերտ կերած ինի, մտավ էն վարար կետը)*:

Գայլի կերպարանափոխման հետ կապված հերոսներ կան նաև սլավոնական դիցարանում: Սլավոնական առասպելներից հայտնի է Վովկուլակը, ով, չարից հալածվելով, մարդուց փոխակերպվել է թափառական գայլի: Իսկ սկանդինավյան առասպելներից հայտնի է քաջ ասպետ Սիգուրդը: Նա հսկայի ուժ ստացավ և իմաստնացավ, երբ կերավ Ֆաֆնիր հրեշի տապակած սիրտը: Ակնհայտ է, որ առասպելի բովանդակությունն ու հերոսը բառացիորեն համապատասխանում են բարբառում գործածական ***Կյուլու սերտ կերած*** դարձվածքին:

Կարելի է նաև պնդել, որ նման բառերի ու դարձվածքների առաջացումը կապված է տոտեմիզմի ժամանակաշրջանի հետ, երբ գայլը պաշտամունքի առարկա էր:

3. ***Կեր*** - առասպելական հերոս, մարմնավորում է չար մահ, կործանում, ոչնչացում (ըստ լեզվաբան Ֆր. Խլղաթյանի): ***Կեր*** բառի բառաբարդմամբ գրական հայերենի խոսակցական տարբերակներում հայտնի են ***կերկոխ*** (չար ուժերից հալածված, շատակերությունից հիվանդ), ***կերյարա*** (անբուժելի վերք) բառերը: Նշված բառերի հետ Ղարաբաղի բարբառն ունի ***անքուն կեր*** դարձվածքը՝ բուն իմաստներով. կործանում, ոչնչացում *(էս խոխան անքուն կերա, լոխ ճղորտումա, տենա ածում)*:

Կեր բառը իր իմաստը պահպանել է նաև ***կուրկուփ կյալ*** դարձվածքի մեջ. պապանձվել, ուտելու կարողությունը կորցնել:

Կուրկուփ -կերից կուփվել, հարված ստանալ, տառապել անբուժելի հիվանդությամբ: *(Խոխան բուրդան կուրկոփա եկալ, էլ պան չի խոսում: Նոր ծնած դանան կուրկուփա եկալ, պան չի օտում)*:

4. ***Կոխվել-կուփել***- հալածվել չար ուժերից, տառապել անհասկանալի հիվանդությամբ: Բառերի ծագումն ու իմաստը կապված է հայոց դիցարանի հետ: Կուփվել կարող են չարը մարմնավորող ուժերը, ղարաբաղի բարբառում այդ հերոսը ուրուրուցակյողն է: Ինչպես տեսնում ենք, մենք հասնում ենք Արտավազդի հայտնի առասպելին: Ուրուրացակյողը կամ գողանում է (սպանում է) իր զոհին, կամ էլ կուփում՝ նրա մարմնին թողնելով իր մատնահետքերը և ձեռքի ափի չափով կապտուկ: Ինչպես երևում է նկարագրությունից, առասպելական այս հրեշը մարդակերպ է:

Ժողովուրդը պահպանել է մի շարք սովորույթներ կոխվել-կուփվելուց փրկվելու համար: Նորածին ունեցող տան շեմը փակել են երկաթե շղթայով, չեն օգտագործել հրեշի սիրելի ուտելիքը՝ միսը, օրորոցից կախել են հմայիլներ՝ չարը խափանելու համար, մանկան բարձի տակ դրել են կտրող գործիքներ:

5. ***Հալ տանել (տարած)*** - հանկարծակի անհետանալ, անհետ կորչել: Հայոց դիցարանի հերոսներից են ալքերը (ոգիներ), որ մարդու աչքից անտեսանելի հայտնվում են ամենուր: Նրանք կարող են հրապուրել մարդկանց իրենց քաղցր ձայնով, տանել իրենց հետ, կարող են խճճել անփույթ կանանց մանվածքը, կամ ընդհակառակը, հյուսել: Բարբառում այսօր էլ գործածական է վերց մարդը հալ տանե, հալ տարա՞վ արտահայտությունները, որոնք ունեն հանկարծակի անհետանալ, անհետ կորչել իմաստները: ***Ալք***-ը Ղարաբաղի բարբառում հավանաբար դարձել է հալ և պահպանել իր իմաստը:

Հայկական բանահյուսությունը և հյուսիսային ժողովուրդների առասպելներն ունեն բազմաթիվ առնչություններ, նմանություններ, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ տարբեր ժամանակաշրջաններում ժողովուրդներն ազդել են միմյանց վրա, և այդ ազդեցությունները իրենց հետքն են թողել թե՛ ժողովրդի գիտակցության, թե՛ բառապաշարի հարստացման վրա:

Սասունցի Դավթի և Իռլանդիայի արքա Արթուրի պատմությունները ունեն նման բազմաթիվ զուգահեռներ. որբությունը, ուրիշի խնամակալության տակ մեծանալը, ջրից հաղթական թուրը հանելը, հոր ժառանգության տեր կանգնելը և այլն:

Գուցե պատահական հնչյունական նմանությամբ կապված են նաև ***թոռա կյամ*** (անձրևում է), ***հալ տանե*** արտահայտությունները հյուսիսային ժողովուրդների ամպրոպի, կայծակի աստված Թորի և դժոխքի տիրակալ, մեռյալների աստվածուհի Հելի անունների հետ: Սակայն մի բան պարզ է. Թոր աստվածը և Հել աստվածուհին իրենց գործառույթով կապված են **թոռա կյամ** և **հալ տարած** արտահայտությունների իմաստին:

Ն. ԱԹԱՆԵՍՅԱՆ
Առաջաձորի միջն. դպրոցի տնօրեն

ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

Մանկությունն անցել է մի կտոր հացի համար պայքարում:

1915թ. տասներկու տարեկան հասակում տեսավ սև մրրիկը, որ տարածվում էր կայծակի արագությամբ: Կոտորածից մի փոքր խմբի հետ ազատվեց նաև ինքը և մինչև 1920թ. դեկտեմբերը ստիպված եղավ դեգերել Անդրկովկասի տարբեր քաղաքներում և գյուղերում: Դա տանջալից պայքար էր գոյության համար: Առանց հոր նա պետք է հոգ տաներ ոչ միայն իր գոյության, այլև երկու տարեկան եղբոր, յոթ տարեկան և ծծկեր քույրերի ու հիվանդ մոր համար:

Էջմիածնում, ուր հավաքել էին Եղեռնից փրկված գաղթականները, եղբոր հետ մուրացկանություն է անում, աղբահորերում հավաքում ուտելիքի ամեն տեսակի մնացուկներ, որով սնվում էր ընտանիքը: Շուտով քաղցից մահանում են երկու քույրերը: Այդ նույն տարվա աշնանը նա ընդունվում է էջմիածնի, ապա Ելիզավետպոլի (Կիրովաբադ) որբանոցը, իսկ մայրը եղբոր հետ տեղափոխվում է գյուղ և բատրակություն անում:

Որբանոցի կիսաքաղց կյանքը Եզրասին երջանկություն էր թվում: Բայց այդ երջանկությունը երկար չտևեց: Թուրքերի կողմից քաղաքը գրավելուց հետո 1918թ. սկզբին նորից փողոց նետվեց: Նորից սկսվեց անապաստանի անուրախ կյանքը՝ մուրացկանությունը:

Ազատվելով նոր արյունալի կոտորածից՝ մայրը և եղբայրը գաղթականների հետ գնացին Թիֆլիս, որտեղ նրանց պատսպարեց հայրենակիցներից մեկը՝ ծխախոտի ֆաբրիկայի մի հին բանվոր: Մեծ ու աղմկոտ քաղաքում Եզրասը զբաղվում է մերթ հատով ծխախոտի վաճառքով, մերթ որպես բեռնող բանվոր այդ նույն ֆաբրիկայում. վաճառում է բոված արևածաղիկ, եգիպտացորեն, շուկաներում մասնակցում «բոսյակների» արկածներին:

Ֆաբրիկայի սեփականատիրոջից ստացած ծեծը վերջ դրեց ծխախոտի վաճառքին, իսկ ֆիզիկական տկարությունը հնարավորություն չտվեց երկար աշխատել բեռնող բանվոր: Երկար ու տանջալից որոնումներից հետո որոշում է բախտը փորձել որպես կոշիկ մաքրող: Դա նախորդներից անվտանգ և նյութական տեսակետից հաջող դուրս եկավ:

Այսպիսի տառապալից կյանքից հետո նա ինչպե՞ս դարձավ խոշոր գիտնական:

Բուռն ձգտումը դեպի ուսումը նրա մոտ միշտ էլ եղել է հենց մանկությունից, որն ավելի ուժեղացավ որբանոցներում: Իսկ Թիֆլիսում եղած ժամանակ ցերեկային հոգնեցուցիչ աշխատանքից հետո երեկոները նստում էր փողոցի լապտերների տակ և ագահորեն գիրք կարդում, որ ժամանակավոր ստանում էր մի ծանոթ գիմնազիստից, որի հայրը գրավաճառ էր: Փոխարենն ինքն էլ լուծում էր նրա խնդիրները: Մանկությունից ամբողջ միտքն ու երազանքն էր ավարտել դպրոցը և դառնալ ուսուցիչ:

1922թ. ավարտում է միջնակարգ դպրոցը, 1926-30 թթ.՝ համալսարանի երկու ֆակուլտետ: Զբաղվում է շատ գիտություններով՝ քիմիա, ընդհանուր կենսաբանություն, գենետիկա, ֆիզիոլոգիա և այլն: Դրա համար էլ, երբ դեռ համալսարանի երկրորդ և երրորդ կուրսի ուսանող էր, մի քանի ամբիոններից առաջարկություն է ստանում դառնալ իրենց աշխատակիցը: Մասնագիտության ընտրության հարցում մեծ տատանումներ է ունեցել: Անորոշ դրությունից նրան դուրս բերեց ծանոթությունը հանճարեղ Պավլովի «Բարձրագույն նյարդային գործունեության օբյեկտիվ ուսումնասիրության 20-ամյա փորձը» գրքի հետ: Այդ առթիվ գրում է. «Ես վերընթերցեցի այդ գիրքը մի քանի անգամ, իրար ետևից կարդում էի և՛ ցերեկը, և՛ գիշերը. ես հրապուրվել էի այդ սքանչելի ստեղծագործությամբ»:

Պավլովի գիրքը որոշեց նրա կյանքի ուղին գիտության մեջ: Արդեն նրա բոլոր ձգտումներն ուղղված էին դեպի Պետերբուրգ, որտեղ այդ ժամանակ ապրում էր Պավլովը: Ավարտելով համալսարանը՝ մեկնում է Պետերբուրգ՝ իր հետ ունենալով ուսանողական կազմակերպությունների և մի պրոֆեսորի երաշխավորագրեր:

Համալսարանի ղեկավարությունն առարկեց: Դեմ էր ուղեգրման. կարծում էր, որ ռուսերենից և ֆիզիոլոգիայից թույլ գիտելիքներով նա կարող է վարկաբեկել երիտասարդ հայկական համալսարանը Պետերբուրգի համաշխարհային գիտնականի աչքում: Չնայած դա արգելք չեղավ, բայց Եզրասի հոգու մեջ տագնապ էր՝ կընդունի՞, արդյոք, Պավլովը իր լաբորատորիայում: Հույսը չէր կտրում: Ասում է. «Կխնդրեմ, կաղաչեմ, որ նա ընդունի ինձ, որ հնարավորություն տա թեկուզ հեռվից դիտելու փորձերը»:

Պավլովը գործուղման մեջ էր արտասահմանում: Ընդունում է Լ.Օրբելին իր լաբորատորիայում: Համառ աշխատանքի շնորհիվ ձեռք է բերում բավականին գիտելիքներ և գործնական ունակություններ 2-3 ամիսների ընթացքում: Վերջացավ ուղեգրման ժամանակը: Երևան վերադառնալուց առաջ հանդիպում է Պավլովին: Աշխարհահռչակ գիտնականը մոտ երկուսուկես ժամ զրուցելուց հետո անձամբ ցույց է տալիս իր լաբորատորիան: «Ես չէի կարողանում աչքս կտրել նրա սքանչելի գլխից, նրա պարզ հայացքից, նրա ազնվագույն դեմքից»,-գրում է Եզրասը:

Ծանր էր թողնել Պետերբուրգը, բայց պետք է գնար Երևան, ապացուցեր ղեկավարությանը, որ Պետերբուրգում չվարկաբեկեց հայկական գիտությունը, ուսանողներին պատմեր թե ինչ է նշանակում իսկական ֆիզիոլոգիա: Նա իր հետ տանում էր Օրբելու կարծիքը և գրավոր խնդրանք Երևանի համալսարանի տնօրինությանը՝ նորից, երկար ժամանակով գործուղել Պետերբուրգ:

1927թ. Եզրաս Հասրաթյանը երկրորդ անգամ մեկնում է Պետերբուրգ: Աշխատում է Լևոն Օրբելու երկու լաբորատորիաներում և հաճախում Պավլովի լաբորատորիան: Համառ գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց առավոտից մինչև ուշ գիշեր (հաճախ էլ գիշերները), ռուսաց լեզվով գիտական գրականություն ընթերցելով՝ կատարելագործում է իր գիտելիքները ֆիզիոլոգիայի բնագավառում: Ուսումնասիրում և տիրապետում է ռուսերենին և օտար մի քանի լեզուների, որ շատ անհրաժեշտ է գիտնականի համար: Նա ապշեցնում, զարմանք է պատճառում աշխատողների շրջանում: Պավլովի և Օրբելու սիրալիր վերաբերմունքը թափ հաղորդեց իր սիրելի գիտությանը տիրապետելու համար մղած պայքարում:

1930թ. ընդունվում է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան: Այն ավարտելուց հետո՝ 1933թ., Պավլովը նրան թողնում է իր ինստիտուտում՝ որպես իր մշտական գիտական աշխատակցի: Անչափ սիրում էր Եզրասին և համարում էր իր լավագույն աշակերտը:

1935թ. Պավլովի երաշխավորությամբ Բեխտերևի անվան ուղեղի ինստիտուտում Եզրաս Հասրաթյանը կազմակերպում և ղեկավարում է կենտրոնական նյարդային համակարգության ֆիզիոլոգիայի բաժանմունքը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մշակել է ճմլվածքների ու ցնցումների բուժման նոր մեթոդներ: Հնարավոր չէ մեկ հոդվածի ծավալում ընդգրկել նրա գիտական գործունեությունը: Միայն ասենք, որ հայ գիտնական-ֆիզիոլոգ, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից Եզրաս Հասրաթյանը իր 120 և իր ղեկավարած բաժանմունքի 200 գիտական աշխատություններով համեստ ծառայություն է մատուցել ֆիզիոլոգիական գիտությանը:

Պատրաստեց Նունե ՄԵԼՔՈՒՄՅԱՆԸ
Հադրութի շրջ. գ.Առաջամուղ

«ԵՍ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԻ ԵՄ»

- Ֆիլմերի համար գրած գործերը, կարելի է ասել, Ձեզ լայն ճանաչում բերեցին: Կինոերաժշտությունը ստեղծագործական ճանապարհին հանգրվանային հենասյո՞ւն էր, թե՞ այլ դեր եք վերապահում նրան:

- Ինձ համար հեշտ էր կինոերաժշտություն գրելը, չափազանց հեշտ: Դա մի յուրօրինակ աշխարհ է: Երբ դու ոտք ես դնում այնտեղ, պետք է նախ և առաջ պարզես, թե որ բանալիով ես բացելու այս ֆիլմի երաժշտությունը, ինչի՞ն պիտի ծառայի, ո՞ր ուղղությամբ, ո՞ր կետերը շեշտի: Երբեմն ինձ համար դժվար է եղել այդ կարևոր բանալին գտնելը, քան դրա լուծման երաժշտությունը կայացնելը: Ես 25 տարեկանում մտա կինոաշխարհ: Մեծ թվով փաստագրական ֆիլմեր արեցի այդ տարիներին: Հինգ տարի անց Սերգեյ Փարաջանովն ինձ հանձնարարեց գրել «Նռան գույնի» երաժշտությունը: Նույն տարին Մալյանն առաջարկեց գրել «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի համար: Կինոերաժշտություն հիմնականում գրել եմ 1969-84 թթ., մի քիչ էլ 84-ից հետո: Այդ շրջանն ինձ համար անչափ հետաքրքիր էր, որովհետև մտերմանում ես գրական և թատերական աշխարհի հետ, նկարիչների հետ (մենք Մինասի հետ աշխատել ենք քանի՞-քանի ֆիլմերում), Մալյանի, Ֆրունզիկ Մկրտչյանի, Սոս Սարգսյանի, Խորեն Աբրահամյանի հետ ինչքան ֆիլմեր եմ արել: Մի ընտանիքի պես էինք, իրենց պակասը շատ եմ զգում, մեկ-մեկ՝ տխրելու աստիճան…

- Արցախը Ձեր կյանքում և ստեղծագործության մեջ մաս ունի՞:

- Երբ մենք նոր էինք ամուսնացել, կինս ինձ Արցախ է բերել: Ես չգիտեի, որ ես Արցախում եմ, ներսում արդեն, չգիտեի, տարիներ հետո իմացա և ուրախ եմ, որ այդ կապը կա, կա իմ տան մեջ: Կնոջս հայրը շուշեցի էր, մայրը՝ կողքի գյուղերից: Այնպես որ մեր տանը այդ ավանդույթները, խոսքուզրույցը, հիշողությունները կան: Ես այստեղ եմ, ես համահայաստանցի եմ…

Հարցազրույցը՝
Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆԻ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

ԱՇՆԱՆ ՀԱՆԴԵՍ

Երաժշտության հնչյունների ներքո պարելով՝ դահլիճ է մտնում Աշուն տատը:

-Բարև ձեզ, սիրելի՛ երեխաներ, հարգելի՛ հյուրեր: Այսօր մեզ համար մեծ տոն է՝ Աշնան տոնը: Տարվա բոլոր եղանակները գեղեցիկ են ու լավ, բայց աշունը իր յուրահատուկ գեղեցկությունն ունի: Այսօր ես մենակ չեմ, ինձ հետ են իմ անբաժանելի և հավատարիմ ամիսները:

-Եկե՛ք, եկեք *(դիմում է ամիսներին),* իմ հավատարիմ ընկերներ: Եկեք մեր թևերը փռենք Ղարաբաղի հանդ ու սարով, բոլոր բնակավայրերով և բոլորին մատուցենք մեր առատ բերքն ու բարիքը:

(Ներս են մտնում ամիսները):

Ամիսներ **-** Աշուն տատի, թույլ կտա՞ք ներկայանալ:

Աշուն - Ներկայացե՛ք:

Սեպտեմբեր- Սեպտեմբերն եմ, սեպտեմբերը,
Ամռան նման մեկ-մեկ տաք եմ,
Մեկ-մեկ ցուրտ եմ ձմռան նման,
Բայց, դե, տեսքս դեռ կանաչ է,
Շուրջս բոլոր հասուն միրգ է,
Բայց քաղելու ենթակա չէ:

Սեպտեմբերին են բացվում բոլոր դպրոցների և ուսումնական հաստատությունների դռները:

Սեպտեմբերին ենք տոնում Արցախի և Հայաստանի անկախության օրերը:

Հոկտեմբեր – Հոկտեմբերն եմ ձեր սիրելի,
Առատ բերք եմ, բերքահավաք,
Ամպ, մառախուղ, տերևաթափ,
Մեղմ անձրևներ, աշնանացան:

Հոկտեմբերին են տոնում Ուսուցչի, Գրադարանավարի, Թարգմանչաց տոները:

Նոյեմբեր - Նոյեմբերն եմ, նոյեմբերը,
Ցուրտ եմ բերում ձմռան նման,
Ձմռան պաշար բազմատեսակ,
Սառը քամի ու անձրևներ:

Աշուն - Լավ, իմ սիրելի՛ ամիսներ, ժամանակն է, որ լսենք նաև մեր հայրենի հողում աճող մրգերին ու բանջարեղենին:

(Ներս են մտնում մրգերն ու բանջարեղենը՝ պարելով և գլխավերևում պահելով զամբյուղներով լիքը միրգ ու բանջարեղեն):

Երգ - Ձա՜ն, ջա՜ն, աշուն...

Աշուն - Դե, սիրելիներս, ներկայացեք:

Խնձոր-Քաղցր ու կարմրաթշիկ,
Խնձորն եմ ես անուշիկ,
Զարդն եմ ձեր սեղանների,
Հիվանդներին սպեղանի:

Տանձ - Եղբայրն եմ ես խնձորի,
Համեղ, հյութեղ միրգ եմ ես,
Շատ-շատերին սիրելի,
Ամառ-ձմեռ ցանկալի:

Դեղձ - Սիրունատես դեղձն եմ ես,
Կարմրաթշիկ ու կլոր,
Անուշահամ իմ միրգը
Կե՛ր ու վազի՛ր տատի գիրկը:

Խաղող - Աշնան զարդը ես եմ, ես,
Սև ու սպիտակ, կարմիր, դեղին,
Ճութ-ճութ կախված վազերից,
Մատակարարն եմ գինու, օղու,
Օշարակի, մուրաբայի,
Քաղցր-քաղցր չամիչի:

Նուռ - Ես մրգերի թագուհին եմ,
Վկա է թագս կարմիր,
Շատ օգտակար միրգ եմ ես
Ու բոլորին սիրելի:

Հոն -Հոնն եմ, հոնն եմ ես թթվաշ,
Փոքր-մոքր եմ թեկուզ մի քիչ,
Ես բոլորին օգտակար եմ,
Լավ մուրաբա ու չամիչ եմ,
Եվ լավ հյութ եմ, և լավ օղի:

Թութ - Ղարաբաղի թթի օղու
Եվ մեղրածոր մեր դոշաբի
Մատակարարը միայն ես եմ,
Զարաշահեք՝ կփոշմանեք:

Մոշ - Մեր դաշտերի, անտառների,
Թփուտների մեջ թաքնված՝
Սպասում եմ, որ ինձ տանեք,
Ես ել դառնամ համեղ սնունդ,
Լավ մուրաբա ու անուշ հյութ:

Ելակ - Ես էլ, քույրիկ, ամաչկոտ եմ,
Ու մի քիչ էլ ես վախկոտ եմ,
Դրա համար միշտ թաքնված,
Գլուխկախ, ամաչելուց կարմրում եմ,
Բայց դե, մեկ է, ինձ սիրում են,
Ուր էլ թաքնվեմ՝ ինձ գտնում և ուտում են:

Թուզ - Թուզն եմ, թուզն եմ ես քաղցրիկ,
Սև ու կարմիր, կանաչ, դեղին,
Բայց, տե՛ս, հանկարծ չուշանաք՝
Տխրությունից ես կլացեմ
Ու կճաքեմ հենց ճյուղին:

Սերկևիլ - Մուրաբա եմ, քաղցր հյութ,
Ունեմ անուշ համ ու հոտ,
Թարմ՝ ես քաղցր եմ, բուրավետ,
Բայց, տես, ինձ չչարաշահես:

(Հնչում է «Դեղնած դաշտերին իջել է աշուն» երգը):

Աշուն տատի - Իսկ հիմա խոսքը տանք բանջարեղենին:

Լոլիկ - Լոլիկն եմ շատ հյութալի,
Կարմիր, դեղին, վարդագույն,
Ես ամենուր իմ տեղն ունեմ՝
Թարմ ու թթու, ճաշերի մեջ ու աղցանի:

Վարունգ - Վարունգն եմ ես զիլ կանաչ,
Փոքր թե մեծ իմ պտուղը միշտ հասուն է,
Ինձ սիրում են մեծ թե փոքր,
Ուտում միայն թարմ ու թթու:

Գազար - Առանց ինձ ի՜նչ աղցան ու ճաշ,
Կամ մանկան ի՜նչ թարմ հյութ,
Ամեն տեղ ես կարևոր եմ,
Վիտամիններով հարուստ եմ:

Սոխ ու սխտոր - Ամբողջ տարին ես ձեզ հետ եմ,
Խոհանոցում իմ տեղն ունեմ,
Տհաճ հոտս թե չհաշվենք,
Ամենակարևոր մթերքն եմ ես:

Կաղամբ - Ես շատ շորեր ունեմ հագիս,
Որ պաշտպանվեմ ձմռան ցրտից, ամռան տապից,
Թթու թե թարմ, եփած թե հում
Պահպանում եմ վիտամիններս:

Բազուկ - Ունեմ արյան կարմիր գույնը,
Վիտամինների մեծ պաշար,
Ամաչկոտ եմ, սակայն, սաստիկ,
Դրա համար էլ կարմիր եմ ես ծնված օրվից:

Լոբի - Ես լոբին եմ ձեզ ճանաչ,
Ամառը ճութ-ճութ՝ դեմքս կանաչ,
Իսկ ձմռանը հատիկ-հատիկ,
Կերակուր եմ դառնում քիչ-քիչ:

Կարտոֆիլ - Շատ կարևոր տեղ ունեմ ես
Ձեր մառանում, խոհանոցում,
Թեկուզ հում ինձ չեն ուտում,
Ճաշի մեջ էլ ոչ մեկն ինձ չի փոխարինում:

Դդում - Արժեքավոր և օգտակար
Դդումն եմ ես,
Եվ մեծերի և փոքրերի
Ճաշացանկի գլխավորն եմ:
Ես համեղ եմ, կանաչ և չոր,
Բայց, դե, վա՜յ քեզ, որ անուն վերագրես:

Աշուն տատի - Մրգերն ու բանջարեղենը բոլորն էլ լավ են ու արժեքավոր, բոլորն էլ հարուստ են վիտամիններով և կարևոր տեղ ունեն մեր սննդացանկում: Մեր կյանքում բոլորն էլ անփոխարինելի են, ու բոլորն էլ շինանյութ են մեր օրգանիզմին:

(Պար հովանոցներով «Կաթիլներ» երգի հնչյունների տակ):

Նաիրա ՏՈՆՅԱՆ
Հադրութի շրջ. Դրախտիկի
Վ.Բաղդասարյանի անվ. միջն. դպրոցի
դաստիարակչական աշխատանքների
գծով կազմակերպիչ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ ԵՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՆԵՐՔՈՆՇՅԱԼ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

1. **Մարտունու հ. 1 մ/դ** - հայոց լեզու, գրականություն՝ 6 ժամ
2. **Ավդուռի հ/դ** - օտար լեզու՝ 8 ժամ
3. **Մյուրիշենի հ/դ** - օտար լեզու՝ 6 ժամ
4. **Ալիբալիի մ/դ** - ֆիզիկա՝ 7 ժամ, ինֆորմատիկա՝ 7ժամ
5. **Շեխերի մ/դ** - ֆիզիկա՝ 15 ժամ, ինֆորմատիկա՝ 7 ժամ, քիմիա՝ 10ժամ
6. **Ծովատեղի հ/դ** - ֆիզիկա՝ 6 ժամ
7. **Ճարտարի հ.3 հ/դ** - ֆիզիկա՝ 6 ժամ
8. **Հաղորտու մ/դ** - ֆիզիկա՝ 7ժամ
9. **Խերխանի հ/դ** - մաթեմատիկա և ինֆորմատիկա-9 ժ (կրկնակի) ֆիզկուլտուրա՝ 9ժամ
10. **Կոլխոզաշենի մ/դ** - քիմիա՝ 7 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ
11. **Քարահունջի հ/դ** - քիմիա, կենսաբանություն՝ 11 ժամ
12. **Եմիշճանի հ/դ** - ֆիզկուլտուրա՝ 12ժամ
13. **Հացու հ/դ** - դասվար՝ 16ժամ
14. **Թաղավարդի մ/դ** - հայոց եկեղեցու պատմություն՝ 7 ժամ, հասարակագիտություն՝ 8 ժամ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

1. **Մեծշենի մ/դ -** օտար լեզու՝ 18 ժամ(կրկնակի)
2. **Մատաղիսի մ/դ** - դասվար՝ 20ժամ, հայոց եկեղեցու պատմություն՝ 7 ժամ, ֆիզկուլտուրա՝ 24 ժամ:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. թիվ 25-26-ում, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. թիվ 23-24-ում և տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության *edu.nkr.am* կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Չև 1)

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը

4. Ինքնակենսագրություն (Չև 4)

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք

8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում: Տեղը, ժամը և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 10.11.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: